ԳՈՐԾԻՔ 7

Գենդերի և անվտանգության գործիքների ժողովածու

Անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողությունը և գենդերը

Իլյա Լուչիակ

DCAF Geneva Centre for Security Sector Governance

OSCE Office for Democratic Institutions and Human Rights ODIHR

UN WOMEN

DCAF-ի մասին
DCAF Անվտանգության ոլորտի կառավարման ժնևյան կենտրոնը հավատարիմ է պետությունների և ժողովուրդների անվտանգության բարելավմանը ժողովրդավարական կառավարման, օրենքի գերակայության, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և գենդերային հավասարության շրջանակներում: 2000 թվականին իր հիմնադրումից ի վեր DCAF-ը նպաստել է խաղաղության և զարգացման կայունությանը՝ օժանդակելով գործընկեր պետություններին և նրանց աջակցող միջազգային կազմակերպություններին անվտանգության ոլորտի կառավարումը ներառական և մասնակցային բարեփոխումների միջոցով բարելավելու նպատակով: DCAF-ը ստեղծում է նորարարական կրթական նյութեր, խթանում է նորմերը և դրական փորձը, տրամադրում է իրավական և քաղաքականության վերաբերյալ խորհրդատվություն և աջակցում է անվտանգության ոլորտում ներգրավված պետական և ոչ պետական շահագրգիռ կողմերի կարողությունների բարձրացմանը:

Հեղինակի մասին
Իլյա Լուչիակը քաղաքագիտության պրոֆեսոր է Վիրջինիայի պոլիտեխնիկական ինստիտուտում և պետական համալսարանում: Վերջին 30 տարիների ընթացքում նա դաշտային ուսումնասիրություններ է իրականացրել Մեքսիկայում, Կենտրոնական Ամերիկայում, Կուբայում, Պերուում և Կոլումբիայում՝ կենտրոնանալով գենդերային հարցերի, անվտանգության և խաղաղության թեմաների վրա: Նա աշխատել է որպես խորհրդատու Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրում (ՄԱԶԾ/UNDP), Միավորված ազգերի՝ Կանանց զարգացման հիմնադրամում (UNIFEM), գլխավոր քարտուղարի՝ գենդերային հարցերով և կանանց առաջխաղացմամբ զբաղվող հատուկ խորհրդատուի գրասենյակում (OSAGI) և Շվեդիայի Միջազգային զարգացման համագործակցության գործակալությունում (SIDA): Պրոֆեսոր Լուչիակն ունի իրավագիտության աստիճան Վիեննայի համալսարանից և դոկտորական աստիճան՝ Այովայի համալսարանից:

Խմբագիրներ
Գրազիելա Փավոնե, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (OSCE/ODIHR) և Մեգան Բասթիք, DCAF

Շնորհակալական խոսք
DCAF, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և ՄԱԿ-Կանայք կառույցն իրենց շնորհակալությունն են հայտնում այն բազմաթիվ անձանց, որոնք իրենց ներդրումն են ունեցել այս նախագծի իրականացմանը: Այդ անձանց ցանկը ներառում է 2018 թվականի դեկտեմբերին Ժնևում տեղի ունեցած սեմինարի մասնակիցներին, ինչպես նաև այն անձանց, որոնք վերանայել և իրենց ներդրումն են ունեցել այս գործիքի նախագծերի կազմման ընթացքում. Օռնելա Մոդերան, Նազլի Յիլդիրիմ Շիրքոյք, Ջենիֆեր Քրոֆթ և Թիինա Քուկամաա-Բաա (ԺՀՄԻԳ), Բրադ Օրչարդ (ՄԱԿ-Կանայք կառույց) և Աննա-Լենա Շլուքթեր ու Լորեյն Սերանո (DCAF): Հատուկ շնորհակալություն Մարթա Գիթոնիին DCAF-ից՝ Գործիքի մշակման աշխատանքների համակարգման համար:
DCAF-ը շնորհակալություն է հայտնում Շվեյցարիայի, Շվեդիայի և ՄԹ DfID գործակալության կողմից աջակցության համար:
Այս գործիքը հրատարակվել է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ OSCE/ODIHR) աջակցությամբ: Պարտադիր չէ, որ նրա բովանդակությունը արտացոլի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ քաղաքականությունը և դիրքորոշումը:
Հրատարակվել է Շվեյցարիայում՝ DCAF Անվտանգության ոլորտի կառավարման ժնևյան կենտրոնի կողմից:

DCAF Անվտանգության ոլորտի կառավարման ժնևյան կենտրոն
Մեզոն դե լա Պե
Յուժեն-Ռիգո փողոց 2E
CH-1202 Ժնև, Շվեյցարիա
Հեռախոս: +41 22 730 94 00
info@dcaf.ch
www.dcaf.ch
Twitter @DCAF_Geneva
Ձևավորում՝ Ալիս Լեյք Համոնդ (alicelh.co)
Կազմի լուսանկարը՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կողմից 2016 թվականի հունիսի 21-ին համատեղ կազմակերպված Կին առաջնորդների միջազգային ֆորումի մասնակիցները © BelTA.

© DCAF, OSCE/ODIHR, UN Women, 2019
Այս գործիքի կիրառումը, թարգմանությունը և տարածումը խրախուսվում է: Սակայն մենք խնդրում ենք Ձեզ ճանաչել և մեջբերել նյութերը և չփոփոխել բովանդակությունը:
Այս փաստաթուղթն ի սկզբանե հրապարակվել է 2020 թվականին DCAF Անվտանգության ոլորտի կառավարման ժնևյան կենտրոնի, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի և ՄԱԿ-Կանայք կառույցի կողմից անգլերեն լեզվով՝ որպես Գենդերի և անվտանգության գործիքների ժողովածու՝ Գործիք 1. Անվտանգության ոլորտի կառավարում, անվտանգության ոլորտի բարեփոխում և գենդեր: Սույն հայերեն տարբերակը հանդիսանում է ոչ պաշտոնական թարգմանություն, որը պատրաստվել և հրատարակվել է DCAF կողմից: Պարտադիր չէ, որ դրա բովանդակությունն արտացոլի ԺՀՄԻԳ քաղաքականությունը և դիրքորոշումը: Տեքստում տարբերությունների դեպքում խնդրում ենք դիտարկել օրիգինալ անգլերեն տարբերակը՝ որպես վերջնական և պաշտոնական տարբերակ:

Մեջբերել որպես DCAF, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և ՄԱԿ-Կանայք կառույց (2019), «Անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողությունը և գենդերը», Գենդերի և անվտանգության գործիքների ժողովածու (Ժնև, DCAF, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, ՄԱԿ-Կանայք կառույց):
ISBN 978-92-9222-597-1

DCAF, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, ՄԱԿ-Կանայք կառույցի Գենդերի և անվտանգության գործիքների ժողովածու

Սույն գործիքը հանդիսանում է DCAF, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և ՄԱԿ-Կանայք կառույցի Գենդերի և անվտանգության գործիքների ժողովածուի մաս, որն իր մեջ ներառում է 9 գործիքներ և մի շարք քաղաքականության ամփոփագրեր:

Գործիքներ

1. Անվտանգության ոլորտի կառավարումը, անվտանգության ոլորտի բարեփոխումը և գենդերը
2. Ոստիկանությունը և գենդերը
3. Պաշտպանությունը և գենդերը
4. Արդարադատությունը և գենդերը
5. Ազատազրկման վայրերը և գենդերը
6. Սահմանների կառավարումը և գենդերը
7. Անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողությունը և գենդերը
14. Հետախուզությունը և գենդերը
15. Գենդերի ինտեգրումը անվտանգության և արդարադատության ոլորտում նախագծերի մշակման և մոնիթորինգի գործընթացում

Քաղաքականության ամփոփագրեր

Կայուն զարգացման, անվտանգության ոլորտի և գենդերային հավասարության օրակարգ 2030
Անվտանգության ոլորտի կառավարման մոտեցումը կանանց, խաղաղությանը և անվտանգությանը
Գենդերը, բռնի ծայրահեղականության կանխարգելումը և ահաբեկչության դեմ պայքարը
Գենդերը և անձնական անվտանգության կարգավորումը

Բացի դրանից, առցանց հասանելի է նաև գենդերային հավասարության և անվտանգության և արդարադատության ոլորտներին առնչվող միջազգային և տարածաշրջանային գործիքների և օրենքների ժողովածուն:

Գենդերի և անվտանգության գործիքների ժողովածուն զարգացնում է DCAF, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, UN-INSTRAW *«Գենդերը և անվտանգության ոլորտի բարեփոխումը»* գործիքների ժողովածուն, որն առաջին անգամ հրատարակվել է 2008 թվականին: Գենդերի և անվտանգության ոլորտի բարեփոխմանն առնչվող հետևյալ գործիքները կարող են օգտագործվել սույն գործիքի հետ միասին.

8. Ազգային անվտանգության քաղաքականության մշակումը և գենդերը
9. Անվտանգության ոլորտի վերահսկողությունը քաղաքացիական հասարակության կողմից և գենդերը
11. Անվտանգության ոլորտի բարեփոխման վերլուծությունը, մոնիթորինգը և գնահատումը և գենդերը
12. Գենդերը և անվտանգության անձնակազմի ուսուցումը
13. Կանանց, խաղաղությանը և անվտանգությանն առնչվող բանաձևերի իրականացումը անվտանգության ոլորտի բարեփոխման գործընթացում

They are home managers meaning they are capable to manage any organisation, even going into parliment.
Balance
Because women see issues from the heart
I Support Leadership for Women because we need Balance decision Making.
Women are also decision Makers
Prosperity & Accountability.
Women is a pillar in our society and is supported by our custom and culture.
We should all be

Բովանդակություն

Հապավումներ v

1. Համառոտ 1

1.2 Այս գործիքի համառոտ բովանդակությունը 2

2. Ի՞նչ է անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողությունը 5

2.1 Խորհրդարանական վերահսկողություն 5

2.2 Անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողություն 6

2.3 Խորհրդարանական համակարգի հիմնական դերակատարները 7

3. Ինչո՞ւ են գենդերային հավասարությունը և գենդերային հարցերի ներառումը կարևոր խորհրդարանական վերահսկողության համար 15

3.1 Համապատասխանություն գենդերային հավասարության միջազգային և տարածաշրջանային իրավական և նորմատիվ չափանիշներին 17

3.2 Անվտանգությանն առնչվող օրենքների և կարգավորումների ներառականության և տարբեր կարիքների բավարարման ապահովում 18

3.3 Անվտանգության ոլորտում գենդերային տեսանկյունից արդարացի բյուջեների հաստատում 20

4. Ինչպիսի՞ն պետք է լինի անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողությունը, որը խթանում է գենդերային հավասարությունը և ներառում է գենդերային տեսանկյունը 27

4.1 Անվտանգությունը և անվտանգության կարիքները սահմանված են ներառական եղանակով և ներառում են գենդերային տեսանկյունը 27

4.2 Գործուն օրենսդրությունը և կառույցները արձագանքում են ՍՊԲ-ին 29

4.3 Գենդերային հարցերի ներառում բյուջետավորման գործընթացի մեջ 32

4.4 Խորհրդարանն ունի դերակատարություն Կանանց, խաղաղության և անվտանգության հարցերով գործողությունների ազգային պլաններում 33

5. Ինչպե՞ս կարող է անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողությունը նպաստել գենդերային հավասարության առաջխաղացմանը և գենդերային տեսանկյան ներառմանը 39

5.1 Անվտանգության ոլորտի գենդերային վերլուծություն, ներառյալ բյուջեի ուսումնասիրում 40

5.2 Խորհրդարանի գենդերային կառույցների ներգրավումը անվտանգության ոլորտի վերահսկողության մեջ 42

5.3 Ներառական գործընթացներ, քաղաքացիական հասարակության հետ կապերի ստեղծում 44

5.4 Խորհրդարանների և մարդու իրավունքների ազգային հաստատությունների և օմբուդս հաստատությունների միջև համագործակցությունը անվտանգության ոլորտի գործուն վերահսկողության ապահովման նպատակով 45

5.5 Խորհրդարանում գենդերային հավասարության հասնելը 47

6. Անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողության գործընթացում գենդերային տեսանկյունների ներառման հիմնական հանձնարարականներ 53

7. Լրացուցիչ աղբյուրներ 55

Լուսանկարում՝ Սողոմոնյան կղզիներում կանանց միջազգային օրվան նվիրված տոնակատարությունների մասնակիցը բռնել է ցուցանակ՝ հաջակցություն խորհրդարանում ընդգրկված կանանց: 2014 © ՄԱԿ-Կանայք/Մարնի Գիլբերթ

ISATA KABIA

Հապավումներ

CEDAW	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա
ՍՊԲ	Սեռով պայմանավորված բռնություն
ՄԽՄ	Միջխորհրդարանական միություն
ԼԳԲՏԻ	Լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքսուալ
ԽԱ	Խորհրդարանի անդամ
ԳԱՊ	Գործողությունների ազգային պլան
ՆԱՏՕ	Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն
ՄԻՊԱՀ	Մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատություն
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակներ
ԱՈԲ	Անվտանգության ոլորտի բարեփոխում
ՄԹ	Միացյալ Թագավորություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն

Լուսանկարում՝ Սիեռա Լեոնեի սոցիալական բարեկեցության, գենդերային հարցերի և երեխաների հարցերի նախարար Իսաթա Քաբիան մասնակցում է ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հարցերով զբաղվող հանձնաժողովի 62-րդ նստաշրջանին, 2018

© ՄԱԿ-Կանայք կառույց

Evento Público
INFANCIA SIN CASTIGO
TENEMOS DERECHO A VIVIR SIN VIOLENCIA
DEMUNA
C.E.3421
Día: Martes 10 de Abril de 2012
Hora: 9:00 am a 12:00 am
MUNICIPIOS ESCOLARES
Hellen Tipian Rodríguez
EX ALCALDESA METROPOLITANA
DE LOS MUNICIPIOS ESCOLARES.
Dr. Luis Fernando Galarreta
Velarde
CONGRESISTA DE LA REPUBLICA

1. Համառոտ

Այս գործիքը սահմանում է տեսլական և ռազմավարություններ, որոնք ուղղված են խորացնելու գենդերային հարցերի ներառումը և գենդերային հավասարության առաջխաղացումը անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողության գործընթացում: Խորհրդարանական վերահսկողությունն ունի առանցքային նշանակություն արդյունավետ և հաշվետու անվտանգության ոլորտի կայացման տեսանկյունից, որը կարող է արձագանքել բոլոր քաղաքացիների կարիքներին: Գենդերային հարցերին արձագանքող վերահսկողությունը խորհրդարանի բոլոր անդամների պատասխանատվությունն է՝ անկախ նրանց սեռից, կուսակցական կամ մասնագիտական պատկանելությունից:

Այս գործիքը բացատրում է անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողության կարևորությունը գենդերային հավասարությանը հասնելու տեսանկյունից, ինչպես նաև ներկայացնում է, թե ինչպես անվտանգության ապահովումը կարող է բարելավվել խորհրդարանների կողմից իրականացվող վերահսկողության գործընթացում գենդերային հարցերի ներառման արդյունքում: Այն ուղղված է սահմանելու, թե ինչ է իրենից ներկայացնում անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողությունը, որը խրախուսում է գենդերային հավասարությունը, և ինչպես կարող են խորհրդարանները արդյունավետ կերպով վերահսկել անվտանգության ոլորտը, ներառյալ պաշտպանությունը, հետախուզությունը և իրավապահ մարմինների աշխատանքը այնպիսի եղանակով, որն իր մեջ ներառում է գենդերային տեսանկյունը: Այս գործիքը ներկայացնում է մի շարք օրինակներ, որոնք ներկայացնում են, թե ինչպես է գենդերային հավասարության ձգտումը ուժեղացնում խորհրդարանական վերահսկողության գործառույթը:

DCAF, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և ՄԱԿ-ի Կանանց առաջխաղացման ուսումնասիրությունների և վերապատրաստումների միջազգային ինստիտուտի (UN-INSTRAW) «Գենդերը և անվտանգության ոլորտի բարեփոխումը» գործիքների ժողովածուի հրատարակումից անցել է ավելի քան տաս տարի, և այդ ժամանակից ի վեր շատ բան է փոխվել: Այս նոր DCAF, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և ՄԱԿ-Կանայք կառույցի «Գենդերը և անվտանգությունը» գործիքների ժողովածուն ներառում է անվտանգության և արդարադատության ոլորտներում գենդերային հավասարության խթանմանն ուղղված հիմնական դասերը: Այս գործիքների ժողովածուի նպատակն է ներկայացնել նոր և ձևավորվող դրական փորձը, ներկայացնել, թե ինչպես են արձանագրվել գենդերային հավասարությանը հասնելու հարցում հաջողությունները, և մտածել, թե ինչպես կարելի է գենդերային հարցերը ներառել անվտանգության և արդարադատության ոլորտների հաստատություններում:

Պերուի Կոնգրեսի կողմից կազմակերպված հանրային միջոցառման մասնակիցները քննարկում են աղջիկների և տղաների նկատմամբ բռնության դադարեցման մասին օրենքը, 2012 © Congreso de la República del Perú.

1.1 Այս գործիքի թիրախային լսարանը

Այս գործիքի հիմնական թիրախային լսարանը ազգային մակարդակում ներառում է խորհրդարանականներին, խորհրդարանների անձնակազմերին և քաղաքական կուսակցություններին: Ազգային մակարդակից անդին, գործիքը կարող է օգտագործվել տարածաշրջանային կառույցների անդամների և աշխատակազմերի կողմից: Քաղաքացիական հասարակության և մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպությունները, մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները (ՄԻՊԱՀ), հետազոտողները և ուսումնասիրողները, որոնք աշխատում են անվտանգության, խորհրդարանների և գենդերային հարցերի ոլորտներում, նույնպես այս գործիքը օգտակար կհամարեն:

1.2 Այս գործիքի համառոտ բովանդակությունը

Բաժին 2-ում բացատրվում է անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողության շրջանակը և կարևորությունը, ինչպես նաև ներկայացվում են խորհրդարանական համակարգում վերահսկողության գործընթացում ներգրավված կարևոր դերակատարները:

Բաժին 3-ում ցույց է տրվում, թե ինչու է անվտանգության ոլորտի՝ գենդերային հարցերին արձագանքող վերահսկողությունը հանդիսանում առանցքային պարտավորություն բոլոր խորհրդարանականների համար: Շեշտը դրվում է հետևյալ հարցերի վրա. գենդերային հավասարության միջազգային և տարածաշրջանային իրավական և նորմատիվ չափանիշներին համապատասխանության կարևորությունը, անվտանգության ոլորտը կարգավորող օրենքների և կարգավորումների ներառականության և տարբեր կարիքներին ուղղվածության ապահովումը, արդարացի բյուջետավորումը, խորհրդարանական վերահսկողության բազմազանության և ներառականության ապահովումը:

Բաժին 4-ը կենտրոնանում է այն հարցի վրա, թե ինչ է իրենից ներկայացնում գենդերային հավասարությունը խթանող անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողությունը: Գործիքում ներկայացվում են խորհրդարանական վերահսկողության գործընթացում գենդերային հարցերի ներառման հիմնական առանձնահատկությունները: Կարևոր մոտեցումները ներառում են անվտանգության և անվտանգության կարիքների սահմանումը ներառական, գենդերային հարցերն արտացոլող եղանակով, կանանց և աղջիկների, ինչպես նաև տղամարդկանց և տղաների դեմ սեռով պայմանավորված բռնության (ՍՊԲ) խնդրին համապարփակ անդրադարձը, գենդերային հարցերի ներառումը բյուջետավորման գործընթացում, ինչպես նաև Կանանց, խաղաղության և անվտանգության հարցերով գործողությունների ազգային պլանների (ԳԱՊ) իրականացումը:

Բաժին 5-ը ներկայացնում է, թե ինչ մոտեցում կարող են ցուցաբերել խորհրդարանները անվտանգության ոլորտի վերահսկողության գործընթացում գենդերային հարցերի ներառման համար: Հիմնական ռազմավարություններն են գենդերային վերլուծությունները, ներառյալ բյուջետավորման գործընթացի վերլուծությունը, անվտանգության ոլորտի վերահսկողության գործընթացում խորհրդարանի՝ գենդերային հարցերով զբաղվող կառույցների ներգրավումը, համագործակցությունը քաղաքացիական հասարակության, ՄԻՊԱՀ-ների և օմբուդս հաստատությունների հետ, խորհրդարանում գենդերային հավասարությանն ուղղված քայլերի ձեռնարկումը:

Բաժին 6-ում ներկայացվում են անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողության գործընթացում գենդերային հարցերի ներառմանն ուղղված հանձնարարականներ:

Բաժին 7-ում ներկայացվում են այլ օգտակար աղբյուրներ:

Head of Defence
Parliament LP
President
CSO leaders
Religious Leaders
Social law
Ethnic armed group
VIE HOTEL

2. Ի՞նչ է անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողությունը

Անվտանգության ոլորտի վերահսկողությունը բոլոր խորհրդարանների կարևոր գործառույթն է: Այս բաժնում բացատրվում է, թե ինչու է այն անհրաժեշտ, ինչ է այն իրենից ներկայացնում և ինչպես է իրականացվում:

2.1 Խորհրդարանական վերահսկողություն

Վերահսկողությունը խորհրդարանների հիմնական գործառույթներից է՝ ներկայացուցչության, օրենքների մշակման և բյուջետավորման գործընթացի վերահսկողության հետ միասին: Խորհրդարանական վերահսկողությունը ներկայացուցչական ժողովրդավարության անկյունաքարերից մեկն է: Այն պետք է լինի հսկողության և հավասարակշռման արդյունավետ գործիք, որը հաշվետվողականության է ենթարկում գործադիր կառավարությանը: Խորհրդարանի կողմից գործադիրի մանրազնին մոնիթորինգը լավ կառավարման ցուցիչ է: Վերահսկողության միջոցով է, որ խորհրդարանը կարող է ապահովել իշխանության հավասարակշռություն և ամրապնդել իր դիրքերը՝ որպես ժողովրդի շահերի պաշտպան:

Խորհրդարանական վերահսկողության հիմնարար նպատակներն են ժողովուրդների ազատությունների և բարեկեցության խթանումը (ներառյալ գենդերային հավասարությունը) և կառավարման բարելավումը: Վերահսկողության գործընթացները գնահատում են կառավարության գործողությունների ազդեցությունը հասարակության վրա, օգնում են ապահովել կառավարության ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ միջոցների տրամադրումը, ի հայտ են բերում կառավարության քաղաքականության և գործողությունների չպլանավորված և բացասական ազդեցությունները և մոնիթորինգի են ենթարկում ազգային և միջազգային մակարդակներում պարտավորությունների իրականացումը: Վերահսկողության գործընթացները ներառում են կառավարության կողմից առաջարկվող գործողությունների ուսումնասիրությունը, ընթացիկ մոնիթորինգը, իրականացված գործողությունների վերանայումը, գնահատումը և ուսումնասիրությունը[1]: Կառավարություններին հաշվետու դարձնելու համար խորհրդարանները պետք է ունենան վերահսկողության օրինական մանդատ, ինչպես նաև այն իրագործելու կարողություն և անկախություն:

Թեև վերահսկողության իրականացումը խորհրդարանի բոլոր անդամների հիմնական պատասխանատվությունն է, նրանք այս պատասխանատվությունը միայնակ չեն իրականացնում: Խորհրդարանը վերահսկողության ոլորտի բազմաթիվ դերակատարներից մեկն է, թեև այն ունի բացառիկ

Լուսանկարում՝ 2014 թվականի մայիսին Ներառական անվտանգություն կազմակերպությունը, ՄԱԶԾ N-Peace ցանցի հետ համագործակցությամբ, Թաիլանդում կազմակերպեց շահերի պաշտպանության և մոբիլիզացման սեմինար մի շարք ոլորտներ ներկայացնող 19 կանանց համար, որոնց թվում էին Մյանմարի խորհրդարանի անդամներ, Նեպալի ոստիկանության սպաներ և Ինդոնեզիայի առաջնորդներ: Սեմինարը նախատեսված էր խաղաղության գործընթացներում ներգրավված կանանց համար և պատրաստում էր մասնակիցներին այլ անձանց վերապատրաստելու և կազմակերպելու գործին՝ կանանց ներառման առաջխաղացման նպատակով: © Ներառական անվտանգություն

սահմանադրական դերակատարություն: Արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար խորհրդարանը պետք է սերտորեն համագործակցի այլ մարմինների հետ, որոնք ներառում են աուդիտի հաստատություններին, ՄԻՊԱՀ-ներին, օմբուդս հաստատություններին, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպություններին: Այս հարցն ավելի մանրամասն քննարկվում է Բաժին 5-ում:

2.2 Անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողություն

Անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողությունը ներառում է պետության զինված և անվտանգության ուժերի վերահսկողություն (օրինակ՝ զինված ուժեր, ոստիկանություն, ժանդարմերիա, նախագահական պահակազոր, հետախուզական ծառայություններ, սահմանային պահպանություն, մաքսային և իմիգրացիոն մարմիններ, ռեզերվային կամ տեղական մարմիններ, բանտեր, պրոբացիոն ծառայություններ և մասնավոր անվտանգության ծառայություններ): Ամփոփելով ասենք՝ անվտանգության ոլորտը ներառում է այն բոլոր հաստատությունները և մարմինները, որոնք դերակատարություն ունեն պետության և ժողովրդի անվտանգության ապահովման գործում:

Անվտանգության ոլորտի վերահսկողության մեխանիզմները մշակված են «ապահովելու համար հսկողություն և հավասարակշռություն, որոնք կանխարգելում են մարդու իրավունքների չարաշահումները, պատասխանատվության են ենթարկում նման չարաշահումների մեղավորներին, հանձնարարականներ են մշակում նման չարաշահումների կրկնությունը կանխելու համար և ապահովում են, որպեսզի ինստիտուտները գործեն արդյունավետ և գործուն կերպով՝ հարգելով օրենքի գերակայությունը»[2]: Անվտանգության ոլորտի կողմից գենդերային հավասարության, կանանց, խաղաղության և անվտանգության ոլորտներում ազգային քաղաքականության իրականացման վերահսկողությունը ներառված է վերահսկողության այս գործառույթների մեջ:

Ելնելով իրենց ներկայացուցչական գործառույթներից՝ խորհրդարանները բացառիկ դերակատարություն ունեն կառավարության՝ անվտանգության քաղաքականությանը և անվտանգության բարեփոխումներին առնչվող որոշումներին լեգիտիմություն տալու կամ այն մերժելու, ինչպես նաև կառավարության և քաղաքացիների միջև անվտանգության հարցերի շուրջ ազգային երկխոսություն ձևավորելու հարցում[3]: Արդյունավետ լինելու դեպքում խորհրդարանական վերահսկողությունը սահմանափակումներ է մտցնում գործադիրի կամ նախագահի իշխանության նկատմամբ: Որպես այդպիսին՝ գործուն վերահսկողությունը կարևոր է *անվտանգության ոլորտի պատշաճ կառավարման* համար, որը բնութագրվում է մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության վերաբերյալ առարկայական մտահոգություններով, ներառյալ գենդերային հավասարության սկզբունքները: Խորհրդարանական վերահսկողությունը կարևոր է նաև կայուն սոցիալական և տնտեսական զարգացման համար (տես՝ Ներդիր 1): Ժողովրդավարական խորհրդարանները վերահսկում են անվտանգության ոլորտի աշխատանքը օրինականության, հաշվետվողականության, թափանցիկության, մասնակցության և քաղաքացիների կարիքներին արձագանքելու սկզբունքների հիման վրա*:

* Անվտանգության ոլորտի կառավարումը և ԱՈԲ ավելի մանրամասնորեն բացատրվում են DCAF ամփոփաթերթերի շարքում:

Գենդերային հավասարության և անվտանգության ոլորտի պատշաճ կառավարման և ԱՈԲ միջև կապերը ավելի մանրամասնորեն քննարկվում են Գործիք 1-ում. Անվտանգության ոլորտի կառավարում, անվտանգության ոլորտի բարեփոխում և գենդեր:

Ներդիր 1. Խորհրդարանական վերահսկողությունը և կայուն զարգացման նպատակների նվաճումը

2015 թվականի սեպտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը ընդունեց Կայուն զարգացման 2030 օրակարգը և Կայուն զարգացման նպատակները (ԿԶՆ): Կայուն զարգացման 2030 օրակարգը հաստատում է, որ օրենքների մշակման, բյուջեների հաստատման, ինչպես նաև անվտանգության ոլորտի հաշվետվողականության ապահովման գործում իրենց դերակատարության շնորհիվ ազգային խորհրդարաններն ունեն կարևորագույն դերակատարություն:

Կայուն զարգացման նպատակների իրականացումը պահանջում է ներառական խորհրդարան, քանի որ ներառականությունն ընկած է ԿԶՆ 16-ին (խաղաղություն, արդարություն և ուժեղ ինստիտուտներ), ինչպես նաև գենդերային հավասարությանը վերաբերող ԿԶՆ 5-ին հասնելու հիմքում: 2030 օրակարգն իրենից ներկայացնում է «թե մարտահրավեր, թե հնարավորություն խորհրդարանների համար՝ զարգացնելու իրենց դերը կառավարությունների հետ աշխատանքում բոլոր ժողովուրդների բարեկեցությունը բարելավելու համար» (ՄԽՄ և ՄԱԶԾ, 2017:11):

Տես՝ «Կայուն զարգացման 2030 օրակարգը, անվտանգության ոլորտը և գենդերային հավասարությունը» քաղաքականության ամփոփագիրը:

Աղբյուրը՝ ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտ (2015), «Վերափոխելով մեր աշխարհը. Կայուն զարգացման 2030 օրակարգ», Նյու Յորք: ՄԱԿ ՏԱՀԴ; ՄԽՄ և ՄԱԶԾ (2017) «2017 թվականի համաշխարհային խորհրդարանական զեկույց - Խորհրդարանական վերահսկողություն. խորհրդարանի՝ կառավարությանը հաշվետվողականության ենթարկելու իրավասությունը», Tignieu-Jameyzieu: Courand et Associés, էջ 11:

Ժողովրդավարական անցում իրականացնող երկրներում անվտանգության ոլորտում հաճախ լինում են լայնորեն տարածված խնդիրներ: Անվտանգության ոլորտի կառույցներում կարող է դիտվել հաշվետվողականության մեխանիզմների պակաս, կոռուպցիա և հանրային վստահության ցածր մակարդակ: Այլ երկրներ կարող են չունենալ բավականաչափ միջոցներ և վերահսկողություն, ունենալ լայնորեն տարածված կոռուպցիա և ոչ բավարար խորհրդարանական վերահսկողություն և դատական համակարգ: Այս խնդիրները լուծելու և անվտանգության ոլորտի կառավարումն ուժեղացնելու համար հաճախ պահանջվում են անվտանգության ոլորտի բարեփոխումներ: Խորհրդարանները կարևորագույն դեր են խաղում անվտանգության ոլորտի բարեփոխումների (ԱՈԲ) գործընթացում: Անվտանգության ոլորտի բարեփոխումն ունի երկու բաղադրիչ. նորմատիվ բաղադրիչը, որն ապահովում է անվտանգության ոլորտի պատշաճ կառավարումը՝ հաշվետվողականությունը կառավարումը և քաղաքացիական վերահսկողությունը ուժեղացնելու միջոցով, և գործնական բաղադրիչ, որն ուղղված է հասնելու արդյունավետության և գործունության՝ ոլորտը վերակազմավորելու և դրա մարդկային և նյութական ռեսուրսները հզորացնելու միջոցով:

2.3 Խորհրդարանական համակարգի հիմնական դերակատարները

Անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողությունն իրականացվում է տարբեր եղանակներով: Կենտրոնական դեր են կատարում խորհրդարանի՝ բյուջեների ուսումնասիրման և հաստատման մեխանիզմները

և անվտանգության ոլորտին առնչվող օրենսդրության ընդունումը և դրա իրականացման վերահսկողությունը:

ԵԱՀԿ հանձնառություններում, օրինակ, հղում է արվում ռազմական և ազգային անվտանգության հարցերում խորհրդարանական վերահսկողությանը, մասնավորապես, «բոլոր այսպիսի ուժերի (այն է՝ զինված և ռազմական ուժերի, ներքին անվտանգության և հետախուզության ծառայությունների և ոստիկանության), ծառայությունների և գործողությունների օրենսդրական վերահսկողության համար գործուն միջոցներ» և «պաշտպանությանն ուղղված ծախսերի օրենսդրական հաստատում»[4]: Խորհրդարանները կարող են մոնիթորինգի ենթարկել, հետաքննել և հաշվետվություններ ներկայացնել անվտանգության ոլորտի քաղաքականությունների, անձնակազմի, ֆինանսների, գործողությունների, սարքավորումների և սպառազինությունների գնումների վերաբերյալ: Որոշ երկրներում խորհրդարաններն ունեն մանդատ՝ ուսումնասիրելու, հաստատելու կամ վետոյի ենթարկելու անվտանգության ոլորտի կառույցներում բարձրաստիճան պաշտոնյաների նշանակումները[5]:

Խորհրդարանական համակարգում կան մի շարք հիմնական դերակատարներ, որոնք իրենց ներդրումն ունեն անվտանգության ոլորտի վերահսկողության գործընթացում:

- *Խորհրդարանականները* կամ խորհրդարանի անդամները տվյալ երկրի ընտրողների կողմից ընտրված ներկայացուցիչներն են: Նրանք պետք է ապահովեն, որպեսզի գործադիրի կողմից առաջարկվող անվտանգության հետ կապված քաղաքականության մեջ հաշվի առնվեն քաղաքացիների խնդիրները: Նրանք կարող են նախաձեռնել և վերանայել օրենքների նախագծեր, խորհրդարանի նիստերի ընթացքում հարցեր բարձրացնել կառավարությանը և պահանջել պաշտոնական ուսումնասիրությունների և հետաքննությունների իրականացում: Ծառայելով որպես հանրության հետ կապի միջոց՝ խորհրդարանականները կարող են կազմակերպել հանրային լսումներ և համապատասխան տեղեկատվությունը տրամադրել քաղաքացիական հասարակության խմբերին: Որոշ դեպքերում առանձին պատգամավորներ հատուկ հանդիպումներ են անցկացնում կառավարության քաղաքականությունը իրենց ընտրողների հետ քննարկելու համար: Այս վերջին գործառույթը՝ հանրության հետ կապող օղակ հանդիսանալը քաղաքական կուսակցության կամ առանձին պատգամավորների մակարդակով, մեծապես ուժեղացնում է խորհրդարանի՝ անվտանգության հարցերով որոշումների կայացման լեգիտիմությունը:
- *Քաղաքական կուսակցությունները* խորհրդարանների հիմնական բաղադրիչ մասն են կազմում: Խորհրդարանների մեծ մասի կազմակերպական կառուցվածքը հիմնված է դրանց վրա: Քաղաքական համակարգերի մեծ մասում քաղաքական կուսակցությունները հանդիսանում են որոշումներ կայացնողների և քաղաքացիական հասարակության միջև հիմնական կապող օղակը: Քաղաքական կուսակցություններն ունեն իրենց հատուկ դիրքորոշումները անվտանգության ոլորտի վերաբերյալ և օրենսդիր մարմինը օգտագործում են որպես հարթակ իրենց դիրքորոշումները հանրությանը ներկայացնելու համար:

- *Խորհրդարանական հանձնաժողովները* հիմնական խորհրդարանական մարմիններն են, որոնք իրականացնում են խորհրդարանի վերահսկողական գործառույթը: Հանձնաժողովները խիստ կարևոր են, քանի որ դրանք կարող են մանրակրկիտ կերպով ուսումնասիրել կառավարության գործունեությունը: Հանձնաժողովի կառուցվածքը խորհրդարանականներին հնարավորություն է տալիս կազմակերպել իրենց աշխատանքը և կիրառել իրենց փորձագիտական գիտելիքները: Ավելին, դրանք հնարավորություն են տալիս տարբեր քաղաքական կուսակցությունների պատկանող խորհրդարանականներին ունենալ ուղիղ հաղորդակցություն[6]:

Հանձնաժողովները կարող են իրականացնել անվտանգության ոլորտի վերահսկողություն իրենց տրված մանդատի շրջանակներում, ինչպես օրինակ՝ հետախուզության վերահսկողության հանձնաժողովը, կամ ավելի լայն մանդատների շրջանակներում, ինչպես օրինակ՝ բյուջեի և ֆինանսների կամ մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովները: Ելնելով անվտանգության ոլորտի բարդությունից՝ անհրաժեշտ է ունենալ հանձնաժողովի լավ մշակված կառուցվածք, եթե խորհրդարանն ուզում է իրական ազդեցություն ունենալ կառավարության վրա:

Մասնավորապես, խորհրդարանական հանձնաժողովները կարող են կարևոր դեր խաղալ անվտանգության ոլորտում և այդ ոլորտի կողմից չարաշահումների մոնիթորինգի, հետաքննությունների և դրանց վերաբերյալ զեկույցների ներկայացման հարցում: Օրինակ՝ Ավստրիայի զինված ուժերի հարցերով զբաղվող խորհրդարանական հանձնաժողովի առաջնային գործառույթն է հավաքագրել բողոքներ և դրանք իր տարեկան հաշվետվության միջոցով ներկայացնել խորհրդարանին: Այս նպատակով հանձնաժողովը ամբողջ երկրով իրականացնում է նախօրոք հայտարարված ստուգումներ[7]:

Գործուն վերահսկող հանձնաժողովն ունի հետևյալ առանձնահատկությունները.

- Նրա գործունեությունը և իրավասությունները հիմնված են ընթացակարգային կանոնների վրա:
- Այն վերահսկում է սեփական ժամանակացույցը (օրակարգը, հարցերը, հանձնաժողովի նիստերի հաճախականությունը) և ունի պատշաճ ճկունություն օրենքներ նախաձեռնելու և փոփոխելու հարցում:
- Այն ունի հասանելիություն բոլոր այն տեղեկություններին, որոնք անհրաժեշտ է համարում իր մանդատի իրականացման համար, ներառյալ դասակարգված տեղեկատվությունը, որը հույժ կարևոր է անվտանգության ոլորտի վերահսկողության տեսանկյունից:
- Այն կարող է օգտագործել փոքրամասնության կողմից ներկայացված զեկույցները:
- Այն ունի միջհանձնաժողովային համակարգման մեխանիզմներ անվտանգության ոլորտին առնչվող այլ հանձնաժողովների հետ, ինչպիսիք են պաշտպանության, ներքին գործերի, բյուջեի, մարդու իրավունքների և արտաքին հարաբերությունների հանձնաժողովները:

- Հանձնաժողովը նախագահում է խորհրդարանի բարձրաստիճան անդամ, որը փորձ ունի պաշտպանության և անվտանգության քաղաքականության ոլորտում: Դրական փորձ է որպես նախագահ ընտրել ընդդիմադիր կուսակցության ներկայացուցչի:
- Այն իրավասու է լսումներ իրականացնել ցանկացած թեմայով, որն անհրաժեշտ կհամարի:
- Այն իրավասու է պահանջել, որ նախարարները և քաղաքացիական ու ռազմական փորձագետները վկայություններ տան լսումների ժամանակ:
- Այն արդյունավետ կերպով օգտագործում է ակադեմիական և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և կառավարությունից դուրս գտնվող փորձագետներին:
- Այն ունի իր սեփական հանդիպումների սենյակները, անձնակազմը, բյուջեն և փաստաթղթերը:8

Խորհրդարանական հանձնաժողովներն ավելի մանրամասնորեն քննարկվում են 5.2 բաժնում:

- *Խորհրդարանական օմբուդս* հաստատությունները և ՄԻՊԱՀ-ները ընդունված մեխանիզմներ են խորհրդարանի վերահսկողության գործառույթի որոշ բաղադրիչներ իրականացնելու համար: ՄԻՊԱՀ-ներն անկախ մարմիններ են, որոնք ստեղծվում են սահմանադրությամբ կամ օրենսդրական ակտով, հիմնադրվում են պետության կողմից և ունեն հստակ մանդատ մարդու իրավունքների պաշտպանության և առաջխաղացման համար (հայտնի են նաև որպես մարդու իրավունքների հանձնաժողովներ կամ հավասար հնարավորությունների հանձնաժողովներ): Բոլոր ՄԻՊԱՀ-ները, ելնելով իրենց՝ մարդու իրավունքներին առնչվող մանդատից, իրավասու են պաշտպանել և խթանել կանանց իրավունքները և գենդերային հավասարությունը: Շատ երկրներ ունեն հատուկ ՄԻՊԱՀ, որը զբաղվում է խտրականության, հավասարության և/կամ կանանց իրավունքների հարցերով, ինչպիսիք են, օրինակ, հավասար հնարավորությունների հանձնաժողովը կամ սեռով պայմանավորված խտրականության հարցերով հանձնաժողովը:

Օմբուդս հաստատությունները պաշտոնական մարմիններ են, որոնք ղեկավարվում են մարդու իրավունքների պաշտպանի կողմից (որը կարող է ունենալ այլ կոչում, ինչպես օրինակ՝ «հանրային պաշտպան» կամ «քաղաքացիների պաշտպան»): Օմբուդս հաստատություն տերմինը ներառում է մի շարք կազմակերպություններ, որոնք ունեն բազմազան մանդատներ, իրավասություններ և գործառույթներ, որոնք սահմանվում են ազգային օրենսդրությամբ:

Օմբուդսմենը / մարդու իրավունքների պաշտպանը սովորաբար նշանակվում է կառավարության կամ խորհրդարանի կողմից, սակայն ունի անկախության զգալի աստիճան: Օմբուդս հաստատությունները պատասխանատու են հանրության շահերի ներկայացման համար՝ իրավունքների խախտումների կամ չարաշահումների դեմ բողոքների հետաքննության և լուծման միջոցով: Որոշ երկրներում (օրինակ՝ Գերմանիայում, Նիդեռլանդներում,

Սերբիայում, Իսպանիայում և Շվեդիայում) ազգային օմբուդսմենը ընդհանուր իրավասություն ունի ընդունելու անհատական բողոքներ, ներառյալ անվտանգության ոլորտի մարմինների դեմ ուղղված բողոքները[9]: Մի շարք երկրներում ձևավորվել են օմբուդս հաստատություններ, որոնք վերահսկում են անվտանգության ոլորտի կառույցներին, ներառյալ ոստիկանությանը և զինված ուժերին, ինչպես օրինակ՝ Հյուսիսային Իռլանդիայի ոստիկանության օմբուդսմենը և Գերմանիայի զինված ուժերի հարցերով խորհրդարանական հանձնակատարը: Այս հաստատությունները սովորաբար վերանայում և իրենց մեկնաբանություններն են ներկայացնում օրենքների նախագծերի վերաբերյալ՝ ելնելով մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, մոնիթորինգի են ենթարկում օրենքների իրականացումը և վերահսկում են պետական մարմինների գործունեությունը, ներառյալ անվտանգության ոլորտի կառույցները, քննում են պետական մարմինների դեմ անհատական բողոքներ, մոնիթորինգի են ենթարկում ազատազրկման վայրերի պայմանները և տարածքները հատկապես այն երկրներում, որտեղ օմբուդս հաստատությունները հանդիսանում են սահմանված ազգային կանխարգելիչ մեխանիզմ Խոշտանգումների և այլ դաժան, ոչ մարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության ներքո: Խորհրդարանի համագործակցությունը օմբուդս հաստատությունների և ՄԻՊԱՀ-ների հետ քննարկվում է 5.4 բաժնում:

- *Խորհրդարանի աշխատակազմը* կենտրոնական դերակատարություն ունի խորհրդարանի գործառույթների իրականացման համար: Աշխատակազմի անդամներն ունեն փորձագիտական գիտելիքներ, որոնցից օգտվում են անհատ պատգամավորները և քաղաքական կուսակցությունները: Արհեստավարժ աշխատակազմը, որն ունի անվտանգության ոլորտի պատշաճ կառավարման վերաբերյալ բավարար վերապատրաստումների և ռեսուրսների հասանելիություն և/կամ հավաքել է զգալի փորձառություն՝ աջակցելով անվտանգության ոլորտի կառավարման խորհրդարանական գործընթացներին, իրենից ներկայացնում է գիտելիքների, կարողությունների և ինստիտուցիոնալ հիշողության բացառիկ շտեմարան, որից կարող են օգտվել խորհրդարանի անդամները: Նրանք կարող են ապահովել անվտանգությանն առնչվող բարդ հարցերի քննարկումների շարունակականությունը և ապահովել պատմական համատեքստ այդ քննարկումների համար: Այդպիսով, աշխատակազմը կարևոր գործոն է խորհրդարանի անդամներին և հանձնաժողովներին հզորացնելու տեսանկյունից՝ անվտանգության ոլորտի գործուն վերահսկողություն ապահովելու համար:

- *Խորհրդարանական հետազոտությունների ծառայությունները* տրամադրում են անվտանգության հարցերի ոչ կուսակցական և հավասարակշված վերլուծություն, որը հատուկ իրականացվում է խորհրդարանականների կարիքներին համապատասխանելու համար:

- *Քաղաքացիական հասարակությունը* հանդիսանում է կարևոր գործընկեր՝ խորհրդարանականներին անվտանգության ոլորտը բարեփոխելու և վերահսկելու գործում աջակցելու գործընթացում: Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը անվտանգության ոլորտի պատշաճ կառավարման կարևորագույն բաղադրիչներից է: Խորհրդարանները կարող են տարբեր միջոցներ օգտագործել քաղա-

քաղաքացիական հասարակության հետ համագործակցելու համար, ներառյալ ազգային մակարդակով երկխոսությունների կազմակերպումը, հանրային խորհրդակցությունների կազմակերպումը, ինչպես օրինակ՝ առաջարկվող օրենքների խորհրդարանական լսումները և փորձագետների կողմից դիտարկումների ներկայացումները: Այսպիսի հարաբերությունները վաղուց ձևավորվել են շատ հասարակություններում և ուժեղացնում են խորհրդարանի լեգիտիմությունը: Խորհրդարանի համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ քննարկվում է 5.3 բաժնում:

Ծանոթագրություններ

1. Հ. Բորն և Գ. Մեսևիջ (2012) «Ծանոթացում հետախուզության վերահսկողությանը», Հ. Բորն և Ա. Ուիլս (խմբ.) Հետախուզական ծառայությունների վերահսկողությունը. գործիքների ժողովածու, Ժնև: DCAF, էջ 7:
2. Մ. Բասթիք (2014) Օմբուդս հաստատությունների և մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների կողմից անվտանգության ոլորտի վերահսկողության գործընթացում գենդերային տեսակետների ներառումը, Ժնև: DCAF, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, ԵԱՀԿ, էջ 5:
3. DCAF (2009) Գենդերը և անվտանգության ոլորտի բարեփոխումը, Ժնև: DCAF, էջ 7:
4. ԵԱՀՀ (1995) «1994թ. Բուդապեշտյան փաստաթուղթ. դեպի նոր դարաշրջանի իրական գործընկերություն», Հելսինկի: Հելսինկյան մոնիթոր: ԵԱՀԿ-ն առաջին անվտանգության կազմակերպությունն էր, որը մշակեց և ընդունեց համապարփակ և համագործակցային անվտանգության գաղափարը, որը անդամ պետությունները վերահաստատել են մի շարք կարևոր փաստաթղթերում և որոշումներում, որոնք ընդունվել են Հելսինկյան եզրափակիչ ակտից հետո: ԵԱՀԿ համապարփակ անվտանգության գաղափարի հիմքում ընկած է այն ըմբռնումը, որ քաղաքական-ռազմական, տնտեսական-բնապահպանական և մարդկային չափումները բոլորն էլ հավասարապես կարևոր են անվտանգության համար:
5. Հ. Բորն, Փ. Ֆլուրի և Ս. Լունն (2010) «Վերահսկողությունը և ուղղորդումը», Հ. Բորն, Փ. Ֆլուրի և Ս. Լունն (խմբ.) Խորհրդարանական վերահսկողության կարևորությունը անվտանգության ոլորտի համար, Ժնև: DCAF, էջ 6; DCAF (2015) «Խորհրդարաններ», ԱՈԲ Ամփոփաթերթերի շարք, Ժնև: DCAF, էջ 2:
6. Վ. Ֆ.Էէկելեն (2010) «Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողությունը ազգային և միջազգային խորհրդարանական հարթություններում», Հ. Բորն, Փ. Ֆլուրի և Ս. Լունն (խմբ) Խորհրդարանական վերահսկողության կարևորությունը անվտանգության ոլորտի համար, Ժնև: DCAF, էջ 47:
7. Հարցազրույց խորհրդարանի անդամ, Ֆեդերալ զինված ուժերի հարցերով խորհրդարանական հանձնաժողովի գործադիր տնօրեն Մայքլ Հեմերի հետ, Ավստրիա, 9 հոկտեմբերի, 2018թ: Հարցազրույց Ֆեդերալ զինված ուժերի հարցերով խորհրդարանական հանձնաժողովի տնօրեն Օտտո Փենդլի հետ, 13 հոկտեմբերի, 2018թ.:
8. Հ. Բորն (2010) «Անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողության դրական փորձից քաղված դասեր», Հ. Բորն, Փ. Ֆլուրի և Ս. Լունն (խմբ.) Խորհրդարանական վերահսկողության կարևորությունը անվտանգության ոլորտի համար, Ժնև: DCAF, էջ 33:
9. Մ. Բենթիք և Հ. Բորն (2013) Անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողությունը, Բրյուսել: Եվրոպական խորհրդարանի խորհրդարանական ժողովրդավարության առաջխաղացման գրասենյակ, էջ 29:

3. Ինչո՞ւ են գենդերային հավասարությունը և գենդերային հարցերի ներառումը կարևոր խորհրդարանական վերահսկողության համար

Գենդերային հավասարությունը պետք է լինի խորհրդարանում որոշումների կայացման գործընթացի կենտրոնում: Գենդերային հարցերի նկատմամբ զգայուն խորհրդարանն արձագանքում է թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց կարիքներին և շահերին իր կազմության, կառուցվածքի, գործառնությունների, մեթոդների և աշխատանքի մեջ: Այն ստանում է իր լեգիտիմությունը իր ընտրողների ձայները ամբողջ բազմազանությամբ և ներառական կերպով ներկայացնելու միջոցով: Ի վերջո, այդպիսի խորհրդարանն ավելի գործուն և արդյունավետ է*:

Խորհրդարանները կարող են և պետք է նպաստեն անվտանգության ոլորտի պատշաճ կառավարմանը՝ անվտանգության ոլորտի կառույցներն ավելի թափանցիկ, հաշվետու, մարդու իրավունքների պահանջներին համապատասխան և գենդերային հարցերի նկատմամբ ավելի զգայուն դարձնելու և օրենքի գերակայության սկզբունքի հիման վրա աշխատելու միջոցով: Գենդերային հավասարությունը անվտանգության ոլորտի պատշաճ կառավարման անբաժանելի մաս է կազմում, քանի որ հավասարությունը հանդիսանում է մարդու հիմնարար իրավունք և ժողովրդավարական սկզբունք: Այն առանցքային նշանակություն ունի օրենքի գերակայության համար: (Սույն գործիքում օգտագործված գենդերային հարցերի հետ կապված մի շարք տերմինների սահմանումները տես Ներդիր 2-ում և 4-ում):

Գենդերային հավասարությանը ձգտելը և գենդերային հարցերի ներառումը օգնում են անվտանգության արդյունավետ ապահովմանը: Անվտանգության արդյունավետ ապահովումը ճանաչում և արձագանքում է հանրության բոլոր խմբերի անվտանգության կարիքներին՝ ներառյալ կանանց և տղամարդկանց, աղջիկներին և տղաներին, լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքսուալ (ԼԳԲՏԻ/LGBTI) անձանց:

Գենդերային կողմնակալությանն արձագանքելու, խտրականությունը կանխարգելելու և անվտանգության հարցում համապարփակ գենդերային մոտեցում ընդունելու համար կարևոր է հասկանալ փոխկապակցվածությունը, այն է՝ ինչպես են գենդերային ինքնությունները և ակնկալիքները հարաբերվում այլ հասարակական գործոնների հետ, ինչպիսիք են էթնիկ, ռասայական և կրոնական պատկանելությունը, տարիքը, սոցիալական դասը, սեռական կողմնորոշումը, ամուսնական կարգավիճակը, հաշմանդամությունը, ինչպես նաև իշխանության և արտոնությունների տարբեր մակարդակներում գտնվող մարդկանց կարգավիճակը, խտրականությունը և մեկուսացումը: Փոխկապակցվածությունը ի հայտ է գալիս, երբ «տվյալ անձն իր ինք-

* Միջխորհրդարանական միությունը, Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը հրատարակել են գենդերային հարցերի նկատմամբ զգայուն խորհրդարանների վերաբերյալ մի շարք գործիքներ, որոնք ներկայացված են Բաժին 7-ում:

Նկարում՝ եգիպտացի կանայք հերթ են կանգնել խորհրդարանական ընտրություններին մասնակցելու համար, 2011 © ՄԱԿ-Կանայք կառույց/ Ֆաթմա Էլզահիրա Յասին:

Ներդիր 2. Գենդերը և գենդերային հավասարությունը

Գենդերը նշանակում է այն դերերը, վարքը, գործողությունները և հատկանիշները, որոնք տվյալ հասարակության մեջ տվյալ ժամանակահատվածում համարվում են պատշաճ՝ ելնելով կենսաբանական սեռից: Այն նաև նշանակում է կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների միջև հարաբերությունները, ինչպես նաև կանանց միջև և տղամարդկանց միջև հարաբերությունները: Այս հատկանիշները, հնարավորությունները և հարաբերությունները սոցիալապես կառուցված են և յուրացվում են սոցիալիզացիայի գործընթացի արդյունքում: Դրանք կախված են իրավիճակից և տվյալ ժամանակից և կարող են փոփոխվել: Գենդերը սահմանում է, թե ինչ է ակնկալվում, թույլատրվում և արժևորվում կնոջ կամ տղամարդու համար տվյալ համատեքստում: Հասարակությունների մեծ մասում առկա են տարբերություններ և անհավասարություններ կանանց և տղամարդկանց միջև՝ նրանց տրվող պատասխանատվության, նրանց կողմից իրականացվող գործողությունների, միջոցների հասանելիության և վերահսկողության, ինչպես նաև որոշումների կայացման հնարավորությունների առումով:

Գենդերային հավասարությունը մարդու հիմնարար իրավունքն է և նպատակ է, որին հասնելը կառավարությունների և միջազգային կազմակերպությունների հանձնառությունն է: Գենդերային հավասարությունը նշանակում է, որ «անհատների իրավունքները, պարտավորությունները և հնարավորությունները կախված չեն լինի այն հանգամանքից, թե արդյոք նրանք ծնվել են որպես կին, թե որպես տղամարդ» (ՄԱԿ Գենդերային հարցերի հատուկ խորհրդականի գրասենյակ/UN OSAGI, 2001): Անվտանգության ոլորտի համատեքստում սա նշանակում է, որ կանայք և տղամարդիկ ունեն հավասար հնարավորություններ՝ մասնակցելու անվտանգության ապահովման, կառավարման և վերահսկողության գործընթացներին, և որ կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների՝ անվտանգության հետ կապված կարիքները հավասարապես բավարարվում են:

Աղբյուրը՝ UN OSAGI (2001) Գենդերային

նության առումով պատկանում է մեկից ավելի մարգինալացված խմբի, ինչը բարդացնում է նրա խոցելիության մակարդակը»[1]: Գենդերի և անվտանգության ոլորտում ցանկացած աշխատանքի համար անհրաժեշտ է հաշվի առնել այն, թե ինչպես են գենդերային հարցերը հարաբերվում էթնիկ և կրոնական պատկանելության, տարիքի, սոցիալական դասի, սեռական կողմնորոշման, ամուսնական կարգավիճակի, ռասայական պատկանելության, հաշմանդամության և այլ դեմոգրաֆիկ ցուցիչների հետ տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում*:

Անվտանգության ոլորտի գործուն և արդյունավետ հաստատությունները ներկայացնում են այն բնակչությանը, որին նրանք ծառայում են, ներառյալ (սակայն ոչ բացառապես) կանանց, տղամարդկանց և ԼԳԲՏԻ անձանց:

Խորհրդարանական վերահսկողությունը կարևոր դերակատարություն ունի անվտանգության ոլորտում գենդերային հավասարությանը հասնելու առումով՝ մի քանի պատճառներով:

- Եթե անվտանգության ոլորտի կառույցները պետք է գործեն գենդերային հավասարության շրջանակներում, կարևոր է ձևավորել բավարար իրավական հիմք և համապատասխան քաղաքականություն:
- Արդարացի և արդյունավետ օրենսդրությունը պետք է հաշվի առնի անհատների տարբեր խմբերի անվտանգության կարիքները և անվտանգության հասանելիությունը. կանայք, տղամարդիկ, աղջիկները և տղաները անվտանգության առումով ունեն տարբեր փորձառություններ:

* Գենդերը, գենդերային դերերը, գենդերային կարծրատիպերը, առնականությունը և կանացիությունը, գենդերային հավասարությունը, փոխկապակցվածությունը և տարբեր սեռական կողմնորոշումները և գենդերային ինքնությունները և դրանց արտահայտումը ավելի մանրամասնորեն քննարկվում են Գործիք 1-ում, «Անվտանգության ոլորտի կառավարումը, անվտանգության ոլորտի բարեփոխումը և գենդերը»:

Փոխկապակցված գենդերային վերլուծության իրականացումը քննարկվում է Գործիք 15-ում, «Գենդերի ներառումը անվտանգության և արդարադատության ոլորտներում նախագծերի մշակման և մոնիթորինգի գործընթացներում»:

- Ազգային օրենքների և հանրային ծառայությունների մատուցման վրա դրանց ազդեցության գենդերային վերլուծությունն անհրաժեշտ է՝ ապահովելու համար, որ իրականացվող գործողությունները բավարարեն հասարակության բոլոր շրջանակների կարիքները:

Այս բաժնում ավելի խորությամբ ուսումնասիրվում է, թե ինչու են գենդերային հավասարության խթանումը և գենդերային հարցերի ներառումը կարևոր անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողության համար.

- Մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային չափանիշներին համապատասխանելու նպատակով,
- Ապահովելու համար, որ անվտանգության և արդարադատության ոլորտները կարգավորող օրենքները և կարգավորումները ներառական են և անդրադառնում են բազմազան կարիքների,
- Անվտանգության ոլորտի համար գենդերային տեսանկյունից արդարացի բյուջեների ձևավորման համար,
- Ապահովելու համար, որ խորհրդարանական վերահսկողությունն ինքնին բազմազան և ներառական է:

3.1 Համապատասխանություն գենդերային հավասարության միջազգային և տարածաշրջանային իրավական և նորմատիվ չափանիշներին

Անվտանգության ոլորտի վերահսկողությունը խորհրդարանների կողմից պետք է ուղղորդվի և ուժեղացվի մարդու իրավունքների, գենդերային հավասարության և օրենքի գերակայության միջազգային նորմերով և չափանիշներով, ինչպիսիք են, օրինակ, Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում (CEDAW, տես՝ Ներդիր 3), ինչպես նաև Կանանց, խաղաղության և անվտանգության օրակարգում ներառված նորմերը (տես՝ Ներդիր 7, էջ 23):

1995 թվականին տեղի ունեցած ՄԱԿ-ի Կանանց չորրորդ համաժողովից ի վեր *գենդերային մեյնսթրիմինգը/ընդգրկումը*՝ այն գործընթացը, որը երաշխավորում է, որ կանանց և տղամարդկանց կարիքները հավասարապես ներառվում են քաղաքականության և գործընթացների մեջ, ընդունվել է որպես գենդերային հավասարությանը հասնելու հիմնական ռազմավարություն[2]: Գենդերային մեյնսթրիմինգը կարող է նպաստել բոլոր կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների, ինչպես նաև տարբեր գենդերային ինքնություն, տարիք, հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների բավարարմանը: Ավելին, այն կարող է օգնել ի հայտ բերել այն ոլորտները, որոնցում անհրաժեշտ են լրացուցիչ գործողություններ կամ այլ միջոցներ, որոնք կարող են շտկել պատմականորեն տեղի ունեցած կամ ներկայումս տեղի ունեցող սեռով պայմանավորված խտրականության ընթացիկ ազդեցությունը:

Սույն գործիքում օգտագործվում է նմանատիպ, սակայն ավելի ներառական գաղափար՝ «գենդերային տեսանկյան ներառում»: *Գենդերային տեսանկյունը* ընկալելու կամ վերլուծելու եղանակ է, որը դիտարկում է գենդերի ունեցած ազդեցությունը մարդկանց հնարավորությունների, սոցիալական դերերի և հարաբերությունների վրա: Այսպիսի տեսանկյունը հնարավորություն է տալիս իրականացնել գենդերային վերլուծություն և

Ներդիր 3. Գենդերային հավասարությանն ու անվտանգությանը վերաբերող միջազգային և տարածաշրջանային գործիքներ

Գենդերային հարցերի տեսանկյունից առկա են մի շարք ազգային, տարածաշրջանային և համաշխարհային իրավական հանձնառություններ, որոնք պարտավորեցնում են պետություններին անվտանգության ոլորտի աշխատանքներում ներառելու գենդերային հարցերը: Միջազգային և տարածաշրջանային իրավական գործիքների ժողովածուն հասանելի է առցանց տարբերակով՝ որպես սույն գործիքների ժողովածուի մաս:

Հիմնական գործիքները ներառում են.

- CEDAW և CEDAW հանձնաժողովի ընդհանուր հանձնարարականներ,
- Յոգյակարտայի սկզբունքները և Յոգյակարտայի +10 սկզբունքները, որոնք վերաբերում են տարբեր սեռական կողմնորոշում, գենդերային ինքնություն և արտահայտումներ ունեցող անձանց իրավունքներին,
- Մարդու իրավունքների տարածաշրջանային պայմանագրերը, ինչպիսիք են Աֆրիկյան միության Մապուտոյի արձանագրությունը և Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի ստամբուլյան կոնվենցիան,
- ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներ. Նպատակ 5-ը (հասնել գենդերային հավասարության) և 16-ը (խաղաղ և ներառական հասարակությունների խթանում) հատուկ կարևորություն ունեն անվտանգության և արդարադատության ոլորտների համար, սակայն ԿԶՆ 1, 2, 3, 4, 6, 7, 8, 10, 11 և 13 նույնպես արդիական են այդ ոլորտների համար,
- Տարածաշրջանային ինստիտուցիոնալ շրջանակները, ինչպիսիք են 2004թ. ԵԱՀԿ Գենդերային հավասարության խթանման գործողությունների պլանը և 2009թ. Նախարարների խորհրդի No. 7/09 որոշումը, որը վերաբերում է քաղաքական և հանրային կյանքում կանանց մասնակցությանը:

արդյունքում գենդերային տեսանկյունը ներառել ցանկացած առաջարկվող ծրագրի, քաղաքականության կամ կազմակերպության մեջ[3]: Գենդերային տեսանկյան ներառումը պետք է իրականացվի գենդերային հավասարության խթանմանն ուղղված ակտիվ միջոցների հետ զուգահեռ:

3.2 Անվտանգությանն առնչվող օրենքների և կարգավորումների ներառականության և տարբեր կարիքների բավարարման ապահովում

Խորհրդարանների գլխավոր իրավասությունը օրենսդիր գործունեությունն է, որը փոխկապակցված է վերահսկողության գործընթացների հետ: Խորհրդարանները ձևավորում են այն իրավական շրջանակները, որոնք կարող են օժանդակել և խթանել գենդերային հավասարությունը և հիմք հանդիսանալ համապատասխան քաղաքականությունների և բյուջեի ձևավորման համար, ներառյալ անվտանգության ոլորտի անձնակազմին, ծառայություններին և չափանիշներին վերաբերող քաղաքականությունը և բյուջեները:

Կանայք ակտիվորեն ընդունվում են անվտանգության ոլորտի կառույցներ և առաջխաղացում են ունենում այդ կառույցներում*: Այս գործընթացները

* Տես՝ Գործիք 2, 3 և 14-ում ներառված քննարկումը և տվյալները:

հիմնված են հետևյալ հիմնավորումների վրա. կանանց և տղամարդկանց համար աշխատանքի հավասար հնարավորությունների պարտավորություն. գենդերային տեսանկյունից հավասարակշռված անվտանգության ոլորտի կառույցները բարձրացնում են անվտանգության ոլորտի լեգիտիմության ընկալումը և դրա նկատմամբ վստահությունը. կանայք ունեն տարբեր օգտակար կարողություններ և ուժեղ կողմեր[4]: Խորհրդարանները կարող են կարևոր դերակատարություն ունենալ անվտանգության ոլորտի կառույցներին ուղղորդելու և աջակցելու տեսանկյունից՝ դրանք կանանց համար ավելի ներառական դարձնելու և հասարակության համար ավելի ներկայացուցչական դարձնելու նպատակով, օրինակ՝ բարեփոխելով այն իրավական կարգավորումները, որոնք խոչընդոտում են կանանց կողմից որոշակի աշխատանքների կատարումը (օրինակ՝ բանակում սերտ մարտական գործողությունների մասնակցությունը)՝ մշակելով օրենսդրություն և օրենսդրական փոփոխություններ, որոնք ուղղված են տարբեր կառույցներում գենդերային հավասարության խթանմանը, և վերահսկելով օրենքների և կարգավորումների ազդեցությունը կանանց և տղամարդկանց վրա:

Անձի գենդերը, ինչպես նաև տարիքը, հաշմանդամությունը, էթնիկ պատկանելությունը, սեռական ինքնությունը և դասակարգային պատկանելությունը սերտորեն կապված են այն բանի հետ, թե ինչպես է նրա վրա ազդում բռնությունը, ինչպես է նա մասնակցում բռնությանը և ինչպիսի փորձառություն է ունենում բռնության դեպքում: Ավելին, անձի գենդերը, այլ առանձնահատկությունների հետ միասին, սերտորեն փոխկապակցված է այն բանի հետ, թե ինչպիսի փորձառություն է նա ունենում և ինչպես է ներգրավվում անվտանգության ապահովման գործընթացում:

Կանայք, տղամարդիկ, տղաները և աղջիկները ունեն անվտանգության տարբեր կարիքներ, որոնք պետք է արտացոլվեն քրեական օրենքներում և անվտանգությանը և արդարադատությանը վերաբերող օրենսդրության մեջ: Մինչ կանայք և աղջիկները կազմում են սեռով պայմանավորված բռնության զոհերի մեծամասնությունը, տղամարդիկ և տղաները նույնպես կարող են տուժել նման բռնությունից, ոչ միայն հակամարտությունների ժամանակ, այլ նաև խաղաղ ժամանակ*: Կարևոր է, որ բռնաբարությունը և այլ սեռական հանցագործությունները սահմանող օրենքները լինեն զգայուն գենդերային հարցերի նկատմամբ: Խորհրդարաններն ունեն իրավասություն անվտանգության կառույցներին և անձնակազմին հաշվետվողականության ենթարկելու՝ կանանց, աղջիկների, տղամարդկանց և տղաների նկատմամբ սեռով պայմանավորված բռնությունը արդյունավետ կերպով կանխելու և դրան արձագանքելու համար:

ԼԳԲՏԻ անձինք և տարբեր սեռական կողմնորոշում, գենդերային ինքնություն և արտահայտումներ ունեցող այլ անձինք (տես՝ Ներդիր 4) հաճախ առնչվում են խտրականության, շահագործման, չարաշահումների և բռնության հատուկ ձևերին: Այս խնդիրը ճանաչվել է բազմաթիվ երկրների և միջազգային կազմակերպությունների կողմից, որոնք իրենց օրենքներում և հայտարարություններում արձագանքում են սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության վրա հիմնված խտրականությանը[5]: ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրականությունը, շահագործումը, չարաշահումները և բռնությունը ներառում են (սակայն սահմանափակված չեն) գենդերային նորմերին չհամապատասխանելու համար ծաղրը և հալածանքները, նվաստացումը, շորթումը և շանտաժը, սեռական ոտնձգությունները և շահագործումը, ինչպես նաև ֆիզիկական և սեռական բռնության տարբեր ձևերը,

* Սույն գործիքի նպատակներից ելնելով՝ «սեռով պայմանավորված բռնություն» (ՍՊԲ) արտահայտությունը օգտագործվում է՝ նկատի ունենալով որևէ անձի նկատմամբ վնասակար գործողությունների իրականացումը տվյալ անձի սեռի վերաբերյալ նորմատիվ ենթադրությունների հիման վրա: Սեռով պայմանավորված բռնությունը ընդհանրական տերմին է, որը վերաբերում է ցանկացած վնասակար գործողության, որն իրականացվում է տվյալ անձի կամքին հակառակ և հիմնված է կանանց և տղամարդկանց միջև հասարակության կողմից վերագրվող տարբերությունների վրա: ՍՊԲ հատուկ տեսակների բնույթը և աստիճանը տարբեր է տարբեր մշակույթներում, երկրներում և տարածաշրջաններում: Օրինակները ներառում են սեռական բռնությունը, սեռական շահագործումը/չարաշահումները, սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգը, ընտանեկան բռնությունը, պարտադրված/ վաղ ամուսնությունը, վնասակար ավանդույթները, ինչպես օրինակ՝ կանանց սեռական օրգանների խեղումը, պատվի համար իրականացվող սպանությունները, այրիի ժառանգությունը, հոմոֆոբիական և տրանսֆոբիական բռնությունը:
Տես՝ ՄԱԿ-Կանայք կառույց (2019), «Գենդերային հավասարության բառարան», https://trainingcentre.unwomen.org/mod/glossary/view.php?id=36 (դիտվել է 6 սեպտեմբերի, 2019թ.):
Մարդու իրավունքների հարցերով բարձրագույն հանձնակատարի գրասենյակ (2011):
«Խտրական օրենքները և գործողությունները և անհատների նկատմամբ սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված բռնությունը», ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով բարձրագույն հանձնակատարի զեկույց, ՄԱԿ A/ HRC/19/41, 17 նոյեմբերի, պարբերություն 20:

Ներդիր 4. Տարբեր սեռական կողմնորոշումներ, գենդերային ինքնություններ և արտահայտումներ

Գործիք 1-ը ավելի մանրամասնորեն բացատրում է, թե ինչ են նշանակում տարբեր սեռական կողմնորոշումները, գենդերային ինքնությունները և արտահայտումները: Այս ներառական արտահայտությունը ճանաչում է այն անձանց, որոնք իրենք իրենց նույնականացնում են որպես ԼԳԲՏԻ, ինչպես նաև այն անձանց, որոնց սեռական կողմնորոշումները չեն հանդիսանում (կամ հանդիսանում են ոչ միայն) հիմնականում հետերոսեքսուալ, և որոնց գենդերային ինքնությունները պարտադիր չէ, որ համընկնեն տղամարդ/կին գենդերային երկակի տարանջատմանը: Սա ներառում է նաև ոչ արևմտյան ոչ երկակի գենդերային ինքնությունները:

Թեև սույն գործիքում հաճախ օգտագործվում են «տղամարդ» և «կին» տերմինները, կարևոր է հիշել, որ որոշ մարդիկ իրենք իրենց չեն նույնականացնում որպես բացառապես տղամարդ կամ կին: Տարբեր սեռական կողմնորոշումներ և գենդերային ինքնություններ և արտահայտություններ ունեցող մարդկանց նկատմամբ խտրականությունը և բռնությունը սերտորեն կապված են գենդերային դերերի հետ:

որոնք որոշ դեպքերում կարող են հանգեցնել մահվան: Այն երկրներում, որտեղ համասեռամոլությունը քրեականացված է, հանցագործությունից տուժած ԼԳԲՏԻ անձինք կարող են դժկամություն դրսևորել արդարադատության մարմիններին դիմելու հարցում[6]: Խորհրդարանների համար բոլոր ընտրողների իրավունքների պաշտպանությունը պետք է լինի հիմնարար նպատակ՝ անկախ նրանց սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից և արտահայտումից:

3.3 Անվտանգության ոլորտում գենդերային տեսանկյունից արդարացի բյուջեների հաստատում

Խորհրդարանները կարող են ձևավորել անվտանգության հետ կապված բյուջեներ, որոնք արձագանքում են գենդերային խնդիրներին և հաշվի են առնում բոլոր ընտրազանգվածների գենդերային կարիքները: Սրան հասնելու համար խորհրդարանները պետք է տեղեկացված լինեն բյուջեների վերահսկողության վերաբերյալ իրենց լիազորությունների մասին (տես՝ Ներդիր 5) և պետք է ցանկանան իրականացնել այդ լիազորությունները: Շատ երկրներում, ելնելով այն լայնորեն ընդունված տեսակետից, որ անվտանգության և պաշտպանության ոլորտները հիմնականում գտնվում են գործադիրի ներքո, խորհրդարանները հրաժարվել են այս հարցերում նախաձեռնություններ իրականացնելու իրենց իրավասությունից՝ հօգուտ գործադիրի: Ի տարբերություն այլ ոլորտների, ինչպիսիք են, օրինակ, գյուղատնտեսությունը և կրթությունը, անվտանգության և պաշտպանության ոլորտների բյուջեների ստուգումը իրենից ներկայացնում է լրացուցիչ մարտահրավեր, քանի որ որոշ բյուջեներ (օրինակ՝ հետախուզության բյուջեն) պարունակում են գաղտնի տեղեկատվություն, և կառավարությունը հակված է չափից դուրս խիստ դասակարգել այդ տեղեկատվությունը[7]: Խորհրդարանին ներկայացվող անվտանգության ոլորտի բյուջեները կարող են չլինել բավականին մանրամասն կամ չպարունակել բյուջեի բոլոր բաղադրիչները, ինչը խորհրդարանի անդամների համար դժվարացնում է հնարավոր

Ներդիր 5. Խորհրդարանների բյուջետային իրավասությունների տեսակները

Բյուջեի հետ կապված իրավասությունների առումով կարելի է առանձնացնել օրենսդիր մարմինների երեք հիմնական տեսակներ.

- Բյուջե ձևավորող օրենսդիր մարմիններ, ինչպես օրինակ՝ ԱՄՆ Կոնգրեսը. այս տեսակի խորհրդարանները կարող են փոփոխել, մերժել կամ նույնիսկ ձևավորել բյուջեի այլընտրանքային նախագծեր: Այս տեսակի խորհրդարանն ակտիվորեն ներգրավված է անվտանգության ոլորտի բյուջեի և քաղաքականության ձևավորման և վերահսկողության գործընթացում և ունի անհրաժեշտ փորձագիտական կարողություններ ունեցող անձնակազմ:
- Բյուջեի վրա ազդեցություն ունեցող օրենսդիր մարմիններ, ինչպիսիք են եվրոպական խորհրդարանների մեծ մասը. այս տեսակի խորհրդարանները կարող են փոփոխել և մերժել բյուջեի նախագծերը, սակայն չեն կարող մշակել իրենց սեփական առաջարկները: Սա չի խանգարում նրանց մանրամասնորեն ուսումնասիրել առաջարկվող բյուջեները և ներկայացնել բազմաթիվ առաջարկներ, ինչպես օրինակ՝ Գերմանիայում և Նիդեռլանդներում:
- Բրիտանական ուեստմինսթերյան համակարգի վրա հիմնված օրենսդիր մարմիններ (ներառյալ Ավստրալիան, Կանադան, Հնդկաստանը, Նոր Զելանդիան, Հարավային Աֆրիկան, Միացյալ Թագավորությունը և Զամբիան). այս տեսակի խորհրդարանները իրավասու են միայն նվազեցնել գոյություն ունեցող բյուջեի գծերը, սակայն չեն կարող ավելացնել որևէ գծով հատկացվող գումարը, կամ չեն կարող բյուջեի մեջ ավելացնել նոր գիծ:

Գենդերային խնդիրներին արձագանքող վերահսկողության տեսանկյունից, տեսակներից յուրաքանչյուրի առանձնահատկությունները հաշվի առնելով՝ բյուջե ձևավորող օրենսդիր մարմինները ամենաարդյունավետն են. նրանք ոչ միայն կարող են փոփոխել ներկայացվող բյուջեի նախագիծը, այլ նաև կարող են ներկայացնել այլընտրանքային նախագիծ:

Աղբյուր՝ Մ Բենթինք և Հ. Բորն (2013) Անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողությունը, Բրյուսել, Եվրոպական խորհրդարանի խորհրդարանական ժողովրդավարության խթանման գրասենյակ, էջ 28:

կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերումը կամ գենդերային վերլուծության իրականացումը:

Այդուհանդերձ, խորհրդարանը վերահսկում է «բյուջեի միջոցները» և պարտավոր է ապահովել, որ կանանց, տղամարդկանց, տղաների և աղջիկների անվտանգության կարիքները հավասարապես հաշվի կառնվեն: Ճանաչելով անվտանգության ոլորտի բյուջեների վերահսկողության հետ կապված մարտահրավերները՝ ամբողջ աշխարհի խորհրդարանները փնտրում են անվտանգության ոլորտի բյուջեների խորհրդարանական վերահսկողության ուղիներ:

Գերմանիայում խորհրդարանի բյուջեի հարցերով հանձնաժողովը ձևավորել է մի ենթահանձնաժողով, որը կոչվում է Վստահության խումբ: Այն զբաղվում է բացառապես հետախուզական գործակալությունների բյուջեների վերահսկողությամբ: Վստահության խմբի անդամներն ունեն դասակարգված տեղեկատվության լայն հասանելիություն և համագործակցում են հետախուզության վերահսկողության հանձնաժողովի հետ՝ ավելի արդյունավետ վերահսկողություն ապահովելու նպատակով[8]:

3.4 Խորհրդարանական վերահսկողության բազմազանության և ներառականության ապահովում

Ակնկալվում է, որ ժամանակակից խորհրդարանները պետք է լինեն ներկայացուցչական, թափանցիկ, հասանելի, հաշվետու և արդյունավետ կառույցներ, որոնցում բազմազան շահագրգիռ կողմերի տեսակետները ոչ միայն ընդունվում են, այլև համարվում են կարևոր: Այս ակնկալիքի մաս է կազմում նաև գենդերային հավասարակշռության ակնկալիքը՝ իդեալական իրավիճակում տղամարդկանց և կանանց հավասար մասնակցությունը խորհրդարանում: Սա ոչ միայն լավ տեղեկացված որոշումների կայացման գործընթացի հարց է, այլ նաև ժողովրդավարական ներկայացուցչականության և լեգիտիմության, ինչը հաստատվում է մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերով (ներառյալ Ներդիր 3-ում նշված փաստաթղթերը):

Սակայն խորհրդարանները պետք է ձգտեն ոչ միայն հասնել կանանց և տղամարդկանց հավասար քանակի, այլ նաև տարբեր առանձնահատկություններ ունեցող կանանց և տղամարդկանց բազմազանության: Այն դեպքերում, երբ խորհրդարանականները պատկանում են տարբեր խմբերի (օրինակ՝ սոցիալ-տնտեսական, դասակարգային, կրոնական և էթնիկ) և ունեն տարբեր առանձնահատկություններ (օրինակ՝ տարիք, սեռ, սեռական կողմնորոշում), նրանք ավելի լավ են արտացոլում և ներկայացնում այն հասարակության բազմազանությունը, որին ծառայում են: Բազմազանություն պետք է լինի նաև խորհրդարանական դերերի և խորհրդարանի ներսում որոշումների կայացման պատասխանատվությունների առումով, ներառյալ կարևորագույն պաշտոնները:

Բազմազան լինելուց բացի, խորհրդարանը պետք է լինի նաև ներառական, հաշվետու և թափանցիկ: Սա նշանակում է, որ խորհրդարանը պետք է լսի, խորհրդակցի և արձագանքի ամբողջ հասարակության կարիքներին և տեղեկատվություն տրամադրի հանրությանը: Ներառական խորհրդարանն ավելի լավ է տեղեկացված հասարակության տարբեր խմբերի՝ անվտանգության հետ կապված յուրահատուկ կարիքների մասին: Երբ խորհրդարանը ներառական է, նրա կողմից իրականացվող վերահսկողության լեգիտիմությունն ավելի ուժեղ է[9]:

Կանայք շարունակում են մնալ ոչ բավարար կերպով ներկայացված ազգային խորհրդարաններում: Միջխորհրդարանական միության տվյալներով՝ 2019 թվականի ապրիլի դրությամբ առկա էր հետևյալ պատկերը[10].

- Կանայք կազմում են աշխարհի խորհրդարանականների ընդամենը 24.3 տոկոսը, և միայն 46 երկրներում է, որ կանանց ներկայացվածությունը խորհրդարանում գերազանցել է 30 տոկոսը*:
- Տարածաշրջանային վերլուծությունը ցույց է տալիս, որ սկանդինավյան երկրների խորհրդարանների անդամների 42.5 տոկոսը կանայք են, Ամերիկաներում կանայք կազմում են խորհրդարանների 30.6 տոկոսը: Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում դիտվում է կանանց ամենացածր ներկայացվածությունը՝ 16.3 տոկոս:
- ԵԱՀԿ անդամ պետություններում կանանց միջին ներկայացվածությունը խորհրդարաններում կազմում է 26.7 տոկոս (տես՝ Աղյուսակ 1):

* Ազգային խորհրդարաններում կանանց վերաբերյալ տվյալները հրապարակվում են Միջխորհրդարանական միության կողմից: https://data.ipu.org/.

Աղյուսակ 1. Կանայք ԵԱՀԿ անդամ պետությունների խորհրդարաններում (տարածաշրջանային միջին)

Տեսակ	Միապալատ կամ ստորին պալատ (%)	Վերին պալատ կամ Սենատ (%)	Երկու պալատները միասին (%)
Եվրոպա – ԵԱՀԿ անդամ պետություններ, ներառյալ սկանդինավյան երկրները	28.6	28.1	28.5
Եվրոպա – ԵԱՀԿ անդամ պետություններ, բացառությամբ սկանդինավյան երկրների	27.2	28.1	27.4

Աղբյուր՝ Միջխորհրդարանական միություն (2019), Կանայք ազգային խորհրդարաններում. տարածաշրջանային միջին ցուցանիշները (իրավիճակը 1 ապրիլի, 2019թ. դրությամբ), http://archive.ipu.org/wmn-e/arc/world010419.htm.

Կանանց մասնակցության առումով լավագույն տասնյակում գտնվող երկրների ցանկում կա վեց երկիր Լատինական Ամերիկայում և Կարիբյան տարածաշրջանում՝ Կուբա, Բոլիվիա, Մեքսիկա, Գրենադա, Նիկարագուա և Կոստա Ռիկա, որոնք կամ արդեն հասել են գենդերային հավասարության, կամ շատ մոտ են դրան:

Արձանագրվում է առաջընթաց: 2007 թվականին կանայք կազմում էին աշխարհի խորհրդարանականների միայն 17 տոկոսը, և միայն 18 երկրներում էր հաղթահարված կանանց ներկայացվածության 30 տոկոսանոց շեմը[11]:

Խորհրդարանների ներսում հանձնաժողովների անդամության/ղեկավարության կազմը նույնպես ենթարկվում է գենդերային բաշխման. առողջապահության և կրթության ոլորտներում ավելի շատ են կին խորհրդարանականները, քան պաշտպանության, բյուջեի կամ արտաքին հարաբերությունների հարցերով հանձնաժողովներում, որոնք հիմնականում ղեկավարվում են տղամարդկանց կողմից: Կարևոր է, որ վերջին տասնամյակներում տեղի ունեցած առաջընթացը որոշ համատեքստերում արձանագրվում է նաև խորհրդարանական հանձնաժողովներում գենդերային հավասարության առումով:

Թե՛ կին, թե՛ տղամարդ խորհրդարանականները կիսում են խորհրդարանական վերահսկողության գործընթացում հասարակության ավելի լայն շերտերի կարիքներն ավելի լավ արտացոլելու պարտականությունը: Գենդերային հավասարության հասնելը պետք է լինի ինքնանպատակ խորհրդարանի համար: Ավելի բազմազան, ներառական խորհրդարանը հանդիսանում է ավելի արդյունավետ մարմին՝ ապահովելով, որ իր վերահսկողական գործառույթները ներառեն գենդերային տեսանկյունը:

Ծանոթագրություններ

1. ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողով (2018) «Գենդերային հավասարության զեկույց. ԵԱՀԿ տարաշաշրջանում շտապ գործողությունների իրականացում սեռով պայմանավորված բռնությանը վերջ տալու նպատակով», Բեռլին. ԵԱՀԿ, էջ 10:
2. ECOSOC (1997) «Համաձայնեցված եզրակացություններ 1997/2», http://www.un.org/womenwatch/osagi/pdf/ECOSOCAC1997.2.PDF.
3. ՄԱԿ-Կանայք կառույց (2019) «Գենդերային հավասարության բառարան», https://trainingcentre.unwomen.org/mod/glossary/view.php?id=36 (դիտվել է 29 հունվարի, 2019թ.):
4. Միջխորհրդարանական միություն (2011) Գենդերային հարցերի նկատմամբ զգայուն խորհրդարաններ. դրական փորձի համաշխարհային վերլուծություն, Ժնև, IPU:
5. Օրինակ՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի և Գլխավոր վեհաժողովի բանաձևեր, https://www.ohchr.org/EN/ Issues/Discrimination/Pages/LGBTUNResolutions.aspx (դիտվել է 26 մարտի, 2019թ.): ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի 1995 թվականի Օտտավայի հայտարարությունը կոչ է անում անդամ պետություններին «ապահովել, որ իրենց սահմանադրություններում, օրենսդրություններում և վարչարարության մեջ բնակչության տարբեր խմբերին պատկանող անձանց նկատմամբ դրսևորվի հավասար հարգանք և ուշադրություն, և թույլ չտրվի որևէ բացահայտ կամ ենթադրյալ ստորադասում՝ պայմանավորված սեռական կողմնորոշմամբ»: Եվրոպական միություն (2013) «Լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքսուալ անձանց (ԼՀԲՏԻ անձանց) մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ուղեցույց»:
6. Օրինակ՝ Լիբանանում թեև համասեռամոլությունը բացահայտորեն քրեականացված չէ, Քրեական օրենսգրքի որոշ տարրեր քրեականացնում են նույնասեռական կապերը: Այս պատճառով ԼԳԲՏԻ անձինք չեն դիմում իրավապահ մարմիններին բռնաբարության դեպքերում, քանի որ վախենում են հետապնդումից և ազատազրկումից: Լ. Խաթաբ և Հ. Միրթինեն (2014) «Գենդերը, անվտանգությունը և անվտանգության ոլորտի բարեփոխումները Լիբանանում», Բեյրութ. Միջազգային ահազանգ/International Alert:
7. Ս. Լունն (2010) «Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության սկզբունքները և գործնական մոտեցումները», Հ. Բորն, Փ. Ֆլուրի և Ս. Լունն (խմբ.) Խորհրդարանական վերահսկողության կարևորությունը անվտանգության ոլորտի համար, Ժնև. DCAF, էջ 24:
8. ԵՄ Հիմնարար իրավունքների գործակալություն (2017) Հետախուզական ծառայությունների կողմից հսկողությունը. հիմնարար իրավունքները, պաշտպանությունը և միջոցները ԵՄ-ում, հատոր II: Տեղական հեռանկարները և իրավական թարմացումները, Լյուքսեմբուրգ: Եվրոպական միության հրապարակումների գրասենյակ, էջ 65:
9. ՄԽՄ և ՄԱԶԾ (2017) «Համաշխարհային խորհրդարանական զեկույց 2017 – խորհրդարանական վերահսկողություն. խորհրդարանի՝ կառավարությանը հաշվետվողականության ենթարկելու իրավասությունը», Tignieu-Jameyzieu: Courand et Associés, էջ 15:
10. ՄԽՄ (2019) «Կանայք ազգային խորհրդարաններում», 1 ապրիլի, https://data.ipu.org/women-ranking?month=4&year=2019.
11. ՄԽՄ (2007) «Կանայք ազգային խորհրդարաններում», 30 ապրիլի, http://archive.ipu.org/wmn-e/arc/world300407.htm

WFP
wfp.org

4. Ինչպիսի՞ն պետք է լինի անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողությունը, որը խթանում է գենդերային հավասարությունը և ներառում է գենդերային տեսանկյունը

Այս բաժնում ներկայացվում է, թե ինչ է նշանակում գենդերային հավասարության վրա կենտրոնացումը խորհրդարանի գործառույթներում, և ուսումնասիրվում են հիմնական առանձնահատկությունները, որոնք խթանում են անվտանգությունը՝ գենդերային տեսանկյունը ներառելու միջոցով:

Քննարկվող հիմնական ոլորտները անվտանգությունը և անվտանգության ներառական կարիքներն են՝ գենդերային տեսանկյունից, ՍՊԲ-ին արձագանքելու համար արդյունավետ օրենսդրությունը և կառույցները, գենդերային հարցերի ներառումը բյուջետավորման գործընթացում, և Կանանց, խաղաղության և անվտանգության հարցերին առնչվող գործողությունների ազգային պլանները: Այս բաժնում ներկայացվում են օրինակներ Աֆրիկայից, Կենտրոնական Ամերիկայից, Մակարոնեզիայից, Հյուսիսային Ամերիկայից և Հարավարևելյան Եվրոպայից:

Բաժին 5-ում քննարկվում է, թե ինչպես խորհրդարանականները կարող են հասնել այս տեսլականին:

4.1 Անվտանգությունը և անվտանգության կարիքները սահմանված են ներառական եղանակով և ներառում են գենդերային տեսանկյունը

Իրենց վերահսկողական գործառույթն արդյունավետ կերպով իրականացնող խորհրդարանները մշակում են ազգային անվտանգության ներառական տեսլական: Այս նպատակին հասնելու համար խորհրդարաններն աջակցում են անվտանգության ոլորտի բարեփոխումներին «ազգային մակարդակով սեփականությունը խորացնելու, անվտանգության տեսլական զարգացնելու, ամուր իրավական շրջանակներ ձևավորելու, հանրային ֆինանսների ավելի լավ կառավարում ապահովելու, ծառայության մշակույթ խրախուսելու և ավելի ներառական և արձագանքող մոտեցում ապահովելու միջոցով»[1]: Տարբեր շերտերից եկող, տարբեր սեռական կողմնորոշում, գենդերային ինքնություններ և արտահայտումներ ունեցող կանայք, տղամարդիկ և անձինք երաշխավորված կերպով ունեն անվտանգության ծառայությունների և հաշվետվողականության մեխանիզմների հավասար հասանելիություն: Առանց դրա՝ անվտանգության ոլորտը պարունակում է ռիսկ, որ հասարակության ավելի հզոր անդամների (ներառյալ անվտանգության կառույցների անձնակազմի)՝ մյուսների նկատմամբ գերակայելու արդյունքում գոյություն ունեցող գենդերային անհավասարություններն էլ ավելի կուժեղանան:

Նկարում՝ Եվրոպական խորհրդարանի անդամները այցելում են Թուրքիա սիրիացի փախստականների ճգնաժամին արձագանքը գնահատելու համար, 2016թ.:

© Եվրոպական միություն 2016 - Եվրոպական խորհրդարան

Հանրային լսումները կարող են խորհրդարաններին օգնել ի հայտ բերել և արձանագրել իրավական էվոլյուցիայի կարիքը: Տոգոյի օրինակը ցույց է տալիս, թե ինչպես կանանց և աղջիկների նկատմամբ բռնության վերաբերյալ հանրային խորհրդակցությունները կարող են աջակցել օրենսդրական գործընթացներին: 2010 թվականին Տոգոյի կին խորհրդարանականները միջազգային գործընկերների, ներառյալ Միջխորհրդարանական միությունը, աջակցությամբ կազմակերպեցին կանանց և աղջիկների նկատմամբ բռնության թեմայով ազգային խորհրդակցություններ: Խորհրդարանի ներսում իրենց առաջնորդական դիրքը օգտագործելով՝ կանայք, ինչպես օրինակ՝ խորհրդարանի փոխխոսնակը և մարդու իրավունքների հարցերով խորհրդարանական հանձնաժողովի նախագահը, կարողացան հավաքագրել միջազգային գործընկերների և ազգային շահագրգիռ կողմերի աջակցությունը Տոգոյի օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի ներսում և դրանից դուրս:

Երկրի բոլոր շրջաններում ծավալված այս գործընթացի արդյունքների հիման վրա մշակվեց կանանց և աղջիկների նկատմամբ բռնության մասին օրենքի նախագիծ, որն առաջին նմանատիպ օրենքն էր Տոգոյում: Ձևավորվեց ներառական խմբագրական թիմ, որում ընդգրկված էին կանանց իրավունքների ակտիվիստներ, գենդերային և իրավական հարցերի անկախ փորձագետներ, Կանանց առաջխաղացման նախարարության տեխնիկական խորհրդատուներ և տարբեր քաղաքական կուսակցություններ ներկայացնող կին և տղամարդ խորհրդարանականներ, որոնք մշակեցին առաջարկվող օրենքի նախագծի բովանդակությունը: Նախքան Ազգային ժողովին ներկայացվելը, վերջնական տարբերակը վերանայվեց խմբագրական թիմի կողմից մեկ շաբաթ տևած միջոցառման ժամանակ: Թեև օրենքը դեռևս չէր ընդունվել սույն գործիքը գրելու պահի դրությամբ, այս գործընթացը ծառայեց կանանց և աղջիկների նկատմամբ բռնության խնդիրը Ազգային ժողովի օրակարգում ներառելու նպատակին և տարբեր շահագրգիռ կողմերին հնարավորություն տվեց պայքարելու օրենսդրական բարեփոխումների համար[2]:

Էլ Սալվադորի խորհրդարանը մեկ այլ օրինակ է, թե ինչպես անվտանգությունը և անվտանգության կարիքները կարող են սահմանվել ներառական կերպով: 2015 թվականին Էլ Սալվադորի խորհրդարանը ընդունեց մի օրենք, որում հաշվի էին առնվում ԼԳԲՏԻ համայնքի անվտանգության հետ կապված յուրահատուկ մարտահրավերները: Խորհրդարանի անդամների և ԼԳԲՏԻ համայնքի միջև երկխոսությունը հանգեցրեց այն եզրակացությանը, որ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա հիմնված ատելությունից բխող հանցագործությունների պատիժները պետք է ավելի խստացվեն: ԼԳԲՏԻ համայնքի նկատմամբ բռնությունը և ոչ պետական խմբերի, հատկապես ավազակախմբերի կողմից հարձակումների անպատժելիությունը լուրջ խնդիրներ են: Սալվադորի արդարադատության համակարգը.

> … ձախողել է ԼԳԲՏԻ համայնքի նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների ճանաչումը և հետաքննությունը, այդպիսով այդ անձանց խոցելի դարձնելով հարձակումների նկատմամբ՝ առանց որևէ պատժամիջոցի: Մասնավորապես, տրանսգենդեր անձինք թիրախ են դարձել դաժան սպանությունների: Այս դեպքերի մեծ մասը չի հետաքննվել, և դրանցից ոչ մեկի վերաբերյալ չի եղել հաջողված դատավարություն[3]:

Այս իրավիճակին արձագանքելու համար Օրենսդիր ժողովը՝ Էլ Սալվադորի միապալատ խորհրդարանը, 2015 թվականին ընդունեց Քրեական օրենսգրքի բարեփոխումները: Բարեփոխումների արդյունքում ընդունվեցին ավելի խիստ

պատժամիջոցներ սպանության և բռնության հիմքով հանցագործությունների համար, ներառյալ «ռասայական, էթնիկ պատկանելության, քաղաքական հայացքների, կրոնական, գենդերային պատկանելության, գենդերային ինքնության և արտահայտման, սեռական կողմնորոշման կամ ցանկացած այլ համարժեք գործոնի հիմքով ատելությունը»[4]:

Ինչպես և Էլ Սալվադորը, Բոսնիայի և Հերցեգովինայի Դաշնությունը 2014 թվականին իրականացրեց քայլեր՝ շտկելու համար այն իրավիճակը, որ Քրեական օրենսգիրքը չէր անդրադառնում ատելության հիմքով հանցագործություններին: Դաշնության Ներկայացուցիչների պալատի՝ խորհրդարանի ստորին պալատի, կին խորհրդարանականների խումբն աշխատեց ատելության քարոզի և ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում գործող քաղաքացիական հասարակության մի կոալիցիայի հետ: Կանանց խումբը մշակեց Քրեական օրենսգրքի փոփոխություններ, որոնք ներառում էին դրույթներ ատելության հիմքով հանցագործությունների՝ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա հիմնված ատելության հիմքով հանցագործությունների մասին: Այնուհետև Կանանց խումբը խորհրդարանին ներկայացրեց Քրեական օրենսգրքի փոփոխությունների համապարփակ նախագիծ: 2016 թվականի փետրվարին Ներկայացուցիչների պալատը Սարաևոյում ընդունեց այդ նախագիծը5:

4.2 Գործուն օրենսդրությունը և կառույցները արձագանքում են ՍՊԲ-ին

Գենդերային հավասարությունը խթանելու նպատակով անվտանգության ոլորտի գործուն վերահսկողություն իրականացնող խորհրդարանը պետք է ապահովի, որ ընդունվում է համապարփակ օրենսդրություն ՍՊԲ-ը կանխարգելելու, հայտնաբերելու, հետաքննելու և քրեական հետապնդման ենթարկելու համար: Օրենսդրությունը պետք է անդրադառնա ՍՊԲ բոլոր տեսակներին, ներառյալ (սակայն ոչ միայն) սեռական ոտնձգությունները, ընտանեկան բռնությունը և ամուսնական բռնաբարությունը, տղամարդ-տղամարդ բռնաբարությունը, պարտադրված ամուսնությունները, պարտադրված հղիությունը կամ հղիության պարտադրված ընդհատումը, սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգը, սեռական օրգանների խեղումը և պատվի համար իրականացվող սպանությունները: Օրենսդրությունը պետք է հանցագործների համար սահմանի համապատասխան պատժամիջոցներ և աջակցի տուժածներին:

Արդյունավետ գործող անվտանգության ոլորտը բոլորին պաշտպանում է բռնությունից և խտրականությունից, ներառյալ կանանց իրենց ողջ բազմազանությամբ (հաշվի առնելով տարիքը, հաշմանդամությունը և այլն) և տարբեր սեռական կողմնորոշումներ, գենդերային ինքնություն և արտահայտումներ ունեցող անձանց: Օրինակ՝ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաշմանդամություն ունեցող կանայք ավելի հավանական է, որ դառնան ընտանեկան բռնության, էմոցիոնալ ճնշումների և սեռական ոտնձգությունների զոհ, քան հաշմանդամություն չունեցող կանայք: Հաշմանդամություն ունեցող կանայք նաև կարող են ավելի մեկուսացված զգալ իրենց և ի վիճակի չլինել հաղորդելու իրենց նկատմամբ իրականացվող չարաշահումների մասին, կամ նրանք կարող են կախված լինել այդ չարաշահումներն իրականացնող անձից: Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության և արտահայտությունների հիման վրա խտրականությունը ներառում է անարդար վերաբերմունք կամ կամայական տարբերակում, որը

հիմնված է տվյալ անձի ոչ հետերոսեքսուալ սեռական կողմնորոշման իրական կամ ենթադրյալ ընկալումների վրա (օրինակ՝ լեսբուհի, համասեռամոլ կամ բիսեքսուալ լինելու վրա), կամ տվյալ անձի կողմից իր սեռի նույնականացման և արտահայտման ձևի հիման վրա՝ արտաքին տեսքի, շարժուձևի կամ վարվեցողության առումով:

Գենդերային հավասարության առաջխաղացման նպատակով անվտանգության ոլորտի գործուն վերահսկողություն իրականացնող խորհրդարանը արձագանքում է գենդերային նախապաշարմունքներին և խտրականությանը՝ իրականացնելով օրենսդրական և քաղաքականության բարեփոխումներ, վերապատրաստելով անվտանգության անձնակազմին, անվտանգության ոլորտում ավելի շատ կանանց ներգրավելով, անցկացնելով անվտանգության ստուգումներ՝ անվտանգության ոլորտից սեռական բռնություն գործադրած անձանց բացառելու նպատակով, բարեփոխելով դատավարական գործընթացները՝ հանցագործության զոհերի և վկաների կարիքներին ավելի լավ արձագանքելու համար՝ միևնույն ժամանակ գիտակցելով կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների տարբեր խմբերի հատուկ կարիքները: Բացի դրանից՝ խորհրդարանները կարող են ծառայել որպես հարթակներ բռնության գենդերային ազդեցության մասին հասարակական տեղեկացվածությունը բարձրացնելու համար:

Գենդերային հավասարության առաջխաղացման նպատակով անվտանգության ոլորտի վերահսկողության համատեքստում խորհրդարանական հանձնաժողովները կարևոր դեր են խաղում առկա օրենքների վերանայման տեսանկյունից՝ ապահովելու համար, որ սեռի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության հիմքով խտրականությունը կտրականապես արգելվի, ազգային օրենքները համապատասխանեն մարդու իրավունքների միջազգային օրենքներին և չափանիշներին, ինչպես նաև, որ օրենսդրությունը ապահովի բավարար հիմքեր ՍՊԲ տարբեր տեսակների՝ առանց որևէ խտրականության կանխարգելման, հայտնաբերման, հետաքննման և դատական կարգով հետապնդման ենթարկելու համար: Օրինակ՝ այն երկրներում, որտեղ ընտանեկան բռնության վերաբերյալ օրենքները կիրառելի չեն միասին ապրող նույն սեռի զույգերի համար, ԼԳԲՏԻ անձինք խոցելի են դառնում: Ընտանեկան բռնության վերաբերյալ օրենքները վերանայելիս խորհրդարանականները կարող են ապահովել, որ ընտանեկան բռնության զոհ դառնալու դեպքում այդ օրենքները պաշտպանեն այն անձանց, որոնք չեն գտնվում ավանդական հետերոսեքսուալ ամուսնության մեջ:

Խորհրդարանները կարևոր դեր են կատարում խաղաղության հաստատման գործընթացների վերահսկողության և օրենսդրական կարգավորման գործում: Այս դերակատարությունը նշված է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ Կանանց, խաղաղության և անվտանգության վերաբերյալ բանաձևերում: Տարածաշրջանային մարմինները, ներառյալ Եվրոպական միությունը, ՆԱՏՕ-ն և Աֆրիկյան միությունը, նույնպես ձևավորել են գենդերային հավասարության և կանանց իրավունքների ուժեղ կարգավորումներ՝ շեշտելով խորհրդարանների դերը կայուն խաղաղության կերտման գործընթացում: Օրինակ՝ Աֆրիկյան միության Անվտանգության ոլորտի բարեփոխման շրջանակային փաստաթղթի Հոդված 42-ում նշվում է, որ Աֆրիկյան միությունը.

> … խորհուրդ է տալիս անդամ պետություններին խրախուսել և աջակցել իրենց օրենսդիր մարմիններին վերահսկել անվտանգության ոլորտի գործունեությունը: Ի հավելումն, (օրենսդիր մարմինները) կմշակեն և

կընդունեն անվտանգության ոլորտի համապատասխան կառույցների գործունեությունը կարգավորվող օրենքներ, կանոնակարգեր և կարգավորումներ և իրավասություն կտան հատուկ հանձնաժողովներին՝ օրենսդրի անունից վերահսկողություն իրականացնելու և պարբերաբար այդ մասին զեկույցներ ներկայացնելու համար[6]:

ԵԱՀԿ Նախարարների խորհրդի No. 7/14 որոշումը կանանց նկատմամբ բռնությունը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու մասին կոչ է անում ԵԱՀԿ անդամ պետություններին ընդգրկել բոլոր դերակատարներին, ներառյալ խորհրդարանները՝ կանանց նկատմամբ բռնության բոլոր տեսակների դեմ պայքարելուն ուղղված համապարփակ և համակարգված ազգային քաղաքականությունների (ի թիվս այլ փաստաթղթերի) մշակման համար[7]:

Զինված հակամարտությունը և դրա ժառանգությունը առաջ են քաշում հատուկ մարտահրավերներ և հնարավորություններ գենդերային հարցերին արձագանքող խորհրդարանական վերահսկողության համար (տես՝ Ներդիր 6): Հակամարտությունից հետո արդարադատության ոլորտի բարեփոխումների ընթացքում խորհրդարանականները կարող են ապահովել, որ ՍՊԲ-ները ներառվեն արդարության հանձնաժողովների և հատուկ դատարանների մանդատների մեջ: Խորվաթիայի խորհրդարանը հանդիսանում է հակամարտության ժամանակ ՍՊԲ-ին արձագանքելու լավ օրինակ: 2015 թվականին Խորվաթիան ընդունեց Հայրենական պատերազմի մասին օրենքը, որով նախատեսվում էին 1991-1995 թվականների պատերազմում սեռական բռնության զոհ դարձած կանանց համար աջակցության միջոցներ:

Ներդիր 6. Խորհրդարանական վերահսկողությունը հակամարտության ազդեցության համատեքստում

Խորհրդարանները պետք է գիտակցեն, որ հակամարտությունների ժամանակ և հակամարտությունից հետո տեղի ունեցող խաղաղության գործընթացների ժամանակ գենդերային դերերը ենթարկվում են զգալի փոփոխությունների: Խաղաղության գործընթացները խորհրդարանների համար հնարավորություններ են ստեղծում անվտանգության ոլորտի վերահսկողությունն ավելի ներառական և բազմազան դարձնելու համար:

Հակամարտության ժամանակ կանայք և տղամարդիկ իրենց վրա են վերցնում նոր պարտականություններ: Կանանց համար սա հաճախ նշանակում է ծառայություն ոչ ավանդական դերերում: Հակամարտությունից հետո եկող փուլում կանանց համար առաջանում են նոր հնարավորություններ՝ ներառվելու անվտանգության ոլորտի կառույցներում և խորհրդարաններում: Կանայք գնալով ավելի շատ են մասնակցում խաղաղության բանակցություններին, դոնորական համաժողովներին և վերակառուցման պլանավորման հետ կապված այլ գործընթացներին: Այս փորձառությունների հիման վրա և զինված պայքարում մասնակցությունից հետո կանայք պահանջում են, որ իրենք նույնպես ներառվեն հակամարտությունից հետո ձևավորվող քաղաքական կառույցներում:

Ավելին, խաղաղության գործընթացները կարող են հնարավորություն տալ զինված ուժերի նախկին մասնակիցներին անցնելու գենդերային վերապատրաստում: Զինաթափումը, զորացրումը և վերաինտեգրման գործընթացները կարող են հնարավորություն ներկայացնել գենդերային բացի վերացման համար, օրինակ՝ զինված ուժերի նախկին կին մասնակիցները կարող են հնարավորություն ստանալ միանալու անվտանգության ոլորտի կառույցներին:

* Գենդերային հարցերին արձագանքող անվտանգության ոլորտի կառավարման և անվտանգության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ Կանանց, խաղաղության և անվտանգության գործողությունների ազգային պլանների մասին քննարկման համար տես՝ Գործիք 1

Այս բեկումնային օրենքը Խորվաթիային դարձրեց Եվրոպայի առաջատար՝ հակամարտության ընթացքում սեռական բռնությունների վերաբերյալ օրենսդրության տեսանկյունից[8]:

ՍՊԲ վերաբերյալ գործուն օրենսդրություն ընդունող խորհրդարանը ապահովում է, որ օրենքները գրվեն գենդերային հարցերի տեսանկյունից զգայուն լեզվով: Այն ապահովում է, որ օրենքները չբացառեն տղամարդկանց կամ կանանց կամ չստեղծեն տպավորություն, որ դրանք կիրառելի են բնակչության միայն որոշակի խմբերի համար: Բացառումից և խտրականությունից խուսափելու համար անվտանգության ոլորտին վերաբերող օրենսդրությունը և քաղաքականությունը պետք է գրվեն այնպես, որպեսզի ընդունվի, որ հասարակությունը, ինչպես նաև ցանկացած առանձին վերցված կառույց, կազմված է տարբեր կարիքներ ունեցող տարբեր խմբերից: Պատշաճ կերպով գրված օրենքները նաև ծառայում են որպես հիշեցում, որ անվտանգության ոլորտում որոշակի պաշտոններ նախատեսված չեն միայն տղամարդկանց կամ միայն կանանց համար[9]:

ՍՊԲ-ին ավելի լավ արձագանքելու համար Լատինական Ամերիկայի որոշ երկրներում ստեղծվել են հատուկ ոստիկանական կայաններ կանանց համար: Այսպիսի կայանների հիմքում ընկած է այն գաղափարը, որ կանայք իրենց ավելի ազատ են զգում սեռական բռնության մասին հաղորդում տալու տեսանկյունից, եթե նրանք ստիպված չեն դա անել տղամարդ ոստիկանների ներկայությամբ: Նիկարագուան կանանց համար նախատեսված ոստիկանական կայանների ստեղծման հաջողված փորձ ունեցող երկրներից մեկն է, որտեղ ի հայտ են բերվել ՍՊԲ-ին արձագանքելու հետ կապված բարդությունները*: Թեև ի սկզբանե ոստիկանություն էին դիմում ավելի մեծ թվով ՍՊԲ ենթարկված նիկարագուացի կանայք, վերջերս ընդունված մի օրենք հետընթաց քայլ է արձանագրել այս հարցում: Նոր օրենքը պահանջում է, որ ՍՊԲ զոհերը նախ և առաջ ջանքեր գործադրեն բռնությունն իրականացնողի հետ հաշտվելու ուղղությամբ և միայն այդ բանից հետո դիմեն իրավական միջոցների: Սա հանգեցրել է ոստիկանություն դիմող կանանց թվի նվազմանը:

Սա ցույց է տալիս, որ խորհրդարանների համար հույժ կարևոր է վերանայել օրենսդրությունը՝ օրենքի մեջ առկա ՍՊԲ-ին արձագանքելուն խոչընդոտող բացերի կամ իրար հակասող օրենքների հայտնաբերման նպատակով: Ավելին, խորհրդարանը պետք է գնահատի օրենքի փոփոխությունների նախագծերի հնարավոր բացասական և դրական ազդեցությունները հասարակության բոլոր շերտերի տղամարդկանց, տղաների, կանանց և աղջիկների համար:

4.3 Գենդերային հարցերի ներառում բյուջետավորման գործընթացի մեջ

«Փողի քսակի ուժը» անվտանգության ոլորտի կառավարման առումով խորհրդարանի իրավասությունների կենտրոնում է: Գենդերային հավասարության խթանման նպատակով անվտանգության ոլորտի գործուն վերահսկողություն իրականացնող խորհրդարանը ցուցաբերում է համակարգային մոտեցում՝ բյուջեի նախագծերի գնահատման և հաստատման, ինչպես նաև գնումների գործընթացներում գենդերային տեսանկյունների ներառման ուղղությամբ: Այս նպատակով անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես են կառավարության քաղաքականությունները, բյուջեի հատկացումները և ծախսերն ազդում կանանց, աղջիկների, տղամարդկանց և տղաների, ինչպես նաև տարբեր շերտեր ներկայացնող անձանց վրա: Այն գնահատում է, թե

* Քննարկվում է Գործիք 2-ում, Գենդերային հարցերը և ոստիկանությունը:

արդյոք «կատարվել են գենդերային հարցերն անտեսող կամ գենդերային նախապաշարմունքների վրա հիմնված ենթադրություններ որևէ գործընթացի կամ քաղաքականության շահառուների մասին, ով է տվյալ գործընթացի կամ քաղաքականության թիրախը, և արդյոք բոլոր խմբերը հավասարապես կօգտվեն տվյալ գործընթացից կամ քաղաքականությունից»[10]:

Քեյփ Վերդեի Կին խորհրդարանականների ցանցը ներգրավված է գենդերային հարցերին արձագանքող բյուջեի վերահսկողության գործընթացում: ՄԱԿ-Կանայք կառույցի գենդերային հարցերով փորձագետների աջակցությամբ ցանցը մշակել է երկրի 2015 թվականի բյուջեի նախագծի արդյունքների վրա հիմնված վերլուծություն: Այնուհետև, այն հաջողությամբ կարողացել է հասնել միջոցների վերահատկացմանը Գենդերային հավասարության և արդարության ուժեղացման ծրագրի համար[11]: Ցանցի կողմից իրականացվող համառ օրենսդրական վերահսկողության արդյունքում մշակվել է գենդերային հարցերին ավելի լավ արձագանքող բյուջե:

Սերբիան գենդերային հարցերին արձագանքող բյուջետավորման մեկ այլ օրինակ է: Սերբիայի կառավարությունը պաշտոնապես ներկայացրեց գենդերային հարցերին արձագանքող բյուջետավորման գաղափարը Սերբիայի խորհրդարանի կողմից 2015 թվականի Բյուջետային համակարգի մասին օրենքի ընդունման ժամանակ: Օրենքում գենդերային հավասարությունը նշվում է որպես բյուջեի նպատակներից մեկը, որը պետք է աստիճանաբար ներկայացվի և ամբողջությամբ իրականացվի մինչև 2020 թվականը: Օրենքի պահանջներին համապատասխանելու համար քաղաքացիական ծառայողները 2015-2016 թվականների ընթացքում անցան վերապատրաստումներ, որոնք համակարգվում էին Ֆինանսների նախարարության Գենդերային հավասարության հարցերի համակարգման մարմնի կողմից[12]:

4.4 Խորհրդարանն ունի դերակատարություն Կանանց, խաղաղության և անվտանգության հարցերով գործողությունների ազգային պլաններում

Գենդերային տեսանկյունը հաշվի առնող և գենդերային հավասարությունը խթանող խորհրդարանը հանձն է առնում իրականացնել «Կանայք, խաղաղությունը և անվտանգությունը» օրակարգը (տես՝ Ներդիր 7):

Աշխարհում 75-ից ավելի երկրներ ընդունել են Կանանց, խաղաղության և անվտանգության գործողությունների հարցով ազգային պլաններ13: Խաղաղության և անվտանգության գործողությունների ազգային պլանները կարող են կարևոր դեր խաղալ անվտանգության ոլորտում գենդերային հավասարության խթանման և անվտանգության ոլորտի վերափոխման գործում, որպեսզի այն ավելի լավ արձագանքի տարբեր գենդերային կարիքներին*:

Խորհրդարանները կարող են կենտրոնական դերակատարություն ունենալ Կանանց, խաղաղության և անվտանգության գործողությունների ազգային պլանների մշակման գործում՝ ապահովելով, որ պահպանվի կենտրոնացումը կանանց, խաղաղության և անվտանգության հարցերի վրա և մոնիթորինգի ենթարկելով գործողությունների ազգային պլանի իրականացումը: Օրինակ՝ ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովին մասնակցող խորհրդարանների 68 տոկոսը մոնիթորինգի են ենթարկում իրենց երկրների գործողությունների ազգային պլանները14: Խորհրդարաններն իրենց տրամադրության տակ ունեն մի շարք գործիքներ գործողությունների ազգային պլանների իրականացումը վերահսկելու համար, ներառյալ խորհրդարանական քննարկումները,

Ներդիր 7. «Կանայք, խաղաղությունը և անվտանգությունը» օրակարգը

2000 թվականին ընդունվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բեկումնային 1325 բանաձևը: Այդ բանաձևը ճանաչում էր, որ կանայք և տղամարդիկ հակամարտության դեպքում ունենում են տարբեր փորձառություններ, հակամարտությունից հետո ունենում են տարբեր կարիքներ, հակամարտության պատճառների և հետևանքների մասին ունենում են տարբեր տեսակետներ և տարբեր ներդրում խաղաղության կերտման գործընթացում: Այնուհետև ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց լրացուցիչ ինը բանաձևեր, որոնք վերաբերում էին կանանց և հակամարտություններին, որոնք միասին կազմում են «Կանայք, խաղաղությունը և անվտանգությունը» օրակարգը: Բանաձևերն են՝ 1325 (2000), 1820 (2008), 1888 (2009), 1889 (2009), 1960 (2010), 2106 (2013), 2122 (2013), 2242 (2015), 2467 (2019)

և 2493 (2019): «Կանայք, խաղաղությունը և անվտանգությունը» օրակարգի նպատակներն են.

- խթանել գենդերային հավասարությունը և ուժեղացնել կանանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում հակամարտությունների կանխարգելման, խաղաղության հաստատման, խաղաղության գործառնությունների և խաղաղության կերտման բոլոր գործընթացներում,
- բարելավել կանանց պատշգանվածությունը հակամարտություններից տուժած միջավայրերում և վերացնել հակամարտությունների հետ կապված սեռական բռնությունները և այդ հանցագործությունների անպատժելիությունը,
- ապահովել, որ հակամարտություններից տուժած միջավայրերում միջազգային օժանդակությունն արձագանքի կանանց հատուկ կարիքներին և բարելավի կանանց իրավունքների պաշպանությունը:

«Կանայք, խաղաղությունը և անվտանգությունը» օրակարգը շեշտադրում է կանանց մասնակցությունը անվտանգության ոլորտում և այդ ոլորտի հարցերում որոշումների կայացման գործընթացում, ինչպես նաև արդարադատության հասանելիությունը կանանց համար: Հետագա քննարկման համար տես՝ «Անվտանգության ոլորտի կառավարման մոտեցումը կանանց, խաղաղությանը և անվտանգությանը» քաղաքականության ամփոփագիրը:

հանձնաժողովների հանդիպումները, լսումները, կառավարության նախարարների հետ հարցուպատասխանները, պաշտոնյաները և փորձագետները, զեկույցների մշակումը և ուսումնասիրումը:

Շատ երկրներում խորհրդարանականները ներգրավված են կառավարության կողմից Կանանց, խաղաղության և անվտանգության օրակարգի իրականացման վերաբերյալ զեկույցների մշակման և ուսումնասիրման գործընթացում: Միացյալ Թագավորությունում Կանանց, խաղաղության և անվտանգության հարցերով խորհրդարանական խումբը, որում ներգրավված են բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները, ստեղծվել է 2006 թվականին՝ միավորելով խորհրդարանականների, քաղաքականություն մշակողների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, որոնք աշխատում են ՄԹ կողմից Կանանց, խաղաղության և անվտանգության ոլորտում հանձնառությունների իրականացման ուղղությամբ: Այս խումբը տարեկան կտրվածքով ուսումնասիրում է կառավարության հաշվետվությունը գործողությունների ազգային պլանի իրականացման վերաբերյալ՝ դրանով իսկ ուժեղացնելով խորհրդարանական և հանրային հաշվետվողականությունը[15]:

Հարցադրումները և միջնորդությունները նույնպես կարող են գործուն միջոցներ լինել: Խորհրդարանականներն օգտագործում են հարցադրումներ արտակարգ իրավիճակներին, ընթացիկ իրադրություններին և նոր առաջացող առաջնահերթություններին արձագանքելու համար: Օրինակ՝ Գերմանիայի խորհրդարանը հարցաքննության է ենթարկել Գերմանիայի ֆեդերալ կառավարությանը միջազգային առաքելություններում տեղի ունեցած սեռական բռնության դեպքերի առնչությամբ այն բանից հետո, երբ հայտնի դարձավ «Օքսֆամ» կազմակերպության աշխատակիցների կողմից 2010 թվականի Հայիթիի երկրաշարժից տուժած անձանց նկատմամբ սեռական շահագործման դեպքերի մասին: Նմանատիպ միջամտություն տեղի է ունեցել Նիդեռլանդներում, որտեղ 2016 թվականին Ներկայացուցիչների պալատը խորհրդարանի նիստի ժամանակ ներկայացրեց մի միջնորդություն՝ պահանջելով, որ պաշտպանության նախարարը ապահովի պաշտպանության նախարարության և դրա գործառնությունների ամբողջական գենդերային փորձաքննություն և հեշտացնի կանանց մասնակցությունը բոլոր բաժինների աշխատանքներում:

Խորհրդարանները կարող են նաև օգտագործել իրենց բյուջետային իրավասությունները վերահսկելու համար կառավարության՝ Կանանց, խաղաղության և անվտանգության օրակարգի իրականացմանն ուղղված ծախսերը: Օրինակ՝ Կանադայում խորհրդարանի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը, միջազգային զարգացման հանձնաժողովը և ազգային պաշտպանության հանձնաժողովը տարեկան առնվազն երեք անգամ հանդիպում են՝ ուսումնասիրելու համար Կանանց, խաղաղության և անվտանգության օրակարգի իրականացման համար պատասխանատու կառավարության ստորաբաժանումների ծախսերը: 2018 թվականին այս վերահսկողությունը նշանակում էր, որ խորհրդարանականները կարող էին հարցեր ուղղել Ազգային պաշտպանության նախարարին: Հարցերն անդրադառնում էին կանանց ներգրավվածությանը, պաշտպանության նախարարության հանձնառությանը խաղաղապահ գործառնությունների իրականացման հարցում, ինչպես նաև նախարարության՝ ռազմական կառույցներում վնասակար և ոչ պատշաճ սեռական վարվեցողության վերացման վերաբերյալ քաղաքականությանը[16]:

Ծանոթագրություններ

1. DCAF (2015) «Խորհրդարաններ. դերերը և պարտականությունները անվտանգության ոլորտի պատշաճ կառավարման գործընթացում», ԱՈԲ Ամփոփաթերթեր շարք, Ժնև: DCAF, էջ 12:
2. Այս օրինակը վերցված է Ա. Ֆոֆանա Իբրահիմ, Ա. Սիվալի Մբայո և Ռ. Մաքքարթի (2015)) «Գենդերային հարցերի ներառումը անվտանգության ոլորտի բարեփոխման և կառավարման գործընթացում», Օ. Մոդերան և Լ. Բոսթրոմ (խմբ.) Հարավային Աֆրիկայում անվտանգության ոլորտի բարեփոխման և կառավարման գործիքների ժողովածու, Ժնև: DCAF:
3. Խորհրդարանականները հանուն համաշխարհային գործողության (2019) «Խորհրդարանականները առաջ են մղում առաջադեմ օրենսդրական բարեփոխումները», 3 մարտի, https://www.pgaction.org/inclusion/case-studies/parliamentarians-driving-progressive-law-reform.html.
4. Ibid.
5. Ibid.
6. Աֆրիկյան միություն (2013) «Անվտանգության ոլորտի բարեփոխման քաղաքականության շրջանակները», Ադիս Աբեբա: Աֆրիկյան միության հանձնաժողով:
7. ԵԱՀԿ (2014) «Կանանց նկատմամբ բռնության կանխարգելում և դրա դեմ պայքար», ԵԱՀԿ Նախարարների խորհրդի որոշում No. 7/14:
8. Ս. Ֆերբախ և Ա. Ռիվզ (2018) «Խորհրդարանների դերը ՆԱՏՕ-ի անդամ պետություններում Կանանց, խաղաղության և անվտանգության օրակարգի առաջխաղացման գործում», Ժնև: DCAF, էջ 12:
9. Ֆոֆանա Իբրահիմ և այլք, վերը նշված ծանոթություն 2, էջ 72:
10. ՄԽՄ և ՄԱԶԾ (2017) «Համաշխարհային խորհրդարանական զեկույց 2017. խորհրդարանական վերահսկողությունը, խորհրդարանի իրավասությունը կառավարությանը հաշվետվության ենթարկելու առումով», Tignieu-Jameyzieu: Courand et Associés, էջ 20:
11. Խորհրդարանական զարգացման AGORA հարթակ (2016) «Գենդերային հավասարության խորհրդարանական վերահսկողությունը», 26 փետրվարի, https://agora-parl.org/interact/blog/parliamentary-oversight-gender-equality (ընթերցվել է 1 սեպտեմբերի, 2019թ.):
12. ՄԱԿ-Կանայք Կառույց և Սերբիայի կառավարություն (2018) «Գենդերային հարցերին արձագանքող բյուջետավարում. գենդերային հավասարությանն ուղղված հանրային ֆինանսների կառավարման բարեփոխման Սերբիայի դրական փորձը, 2008 - 2017», https://www.undp.org/content/dam/unct/ serbia/docs/Publications/UNW_GRB_03%202017_ENG_digital_0030%20FINAL.pdf (ընթերցվել է 9 դեկտեմբերի, 2019թ.):
13. Տես՝ Կանանց միջազգային լիգայի կայքը, որտեղ հավաքագրված է տեղեկատվություն գործողությունների ազգային պլանների վերաբերյալ http://peacewomen.org:
14. Ֆերբախ և Ռիվզ, վերը նշված ծանոթություն 8:
15. Գենդերային գործողություն հանուն խաղաղության և անվտանգության (2019) «Կանանց, խաղաղության և անվտանգության հարցերով զբաղվող բոլոր կուսակցությունները ներառող խորհրդարանական խումբ», http://gaps-uk.org/about/appg/ (ընթերցվել է 9 դեկտեմբերի 2019թ.):
16. Ֆերբախ և Ռիվզ, վերը նշված ծանոթություն 8, էջ 16:

5. Ինչպե՞ս կարող է անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողությունը նպաստել գենդերային հավասարության առաջխաղացմանը և գենդերային տեսանկյան ներառմանը

Այս բաժնում ներկայացվում են մի քանի կարևոր մեխանիզմներ, որոնցով կարելի է ուժեղացնել անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողությունը գենդերային հավասարությունը խթանելու նպատակով: Գերակա ռազմավարությունը հանդիսանում է գենդերային խնդիրների ներգրավումը խորհրդարանի գործունեության բոլոր ոլորտներում: Ինչպես ներկայացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից.

> *Գործադիր իշխանության ճյուղում գենդերային հավասարության խնդիրներին համալիր մոտեցումն իրենից ներկայացնում է տվյալ կառույցի ներքին ձևափոխում (ինչպես է կատարվում աշխատանքը), դրա արդյունքների ձևափոխում (ինչպիսի օրենսդրություն է ընդունվում և ինչպիսի բովանդակություն ունի այդ օրենսդրությունը) և դրա կապերի ձևափոխում (ում հետ է երկխոսում տվյալ կառույցը, ում է վերահսկում և ում է հաշվետու)[1]:*

Անվտանգության ոլորտի վերահսկողության մեջ գենդերային տեսանկյան ներառման ավելի հստակ մեխանիզմները ներառում են.

- անվտանգության ոլորտի գենդերային վերլուծություն, ներառյալ բյուջեի ուսումնասիրություն,
- անվտանգության ոլորտի վերահսկողության գործընթացում հատուկ գենդերային ենթակառուցվածքների օգտագործում, ինչպիսիք են գենդերային հավասարության հարցերով խորհրդարանական հանձնաժողովը կամ կանանց խորհրդարանական խումբը,
- ներառական գործընթացներ, կապ համայնքների հետ,
- անվտանգության ոլորտում ներգրավված օմբուդս հաստատությունների հետ համագործակցության ուժեղացում,
- Խորհրդարանի ներսում գենդերային հավասարություն:

*Գործիք 15.
Գենդերի ներառումը անվտանգության և արդարադատության ոլորտներում ծրագրերի նախագծման և մոնիթորինգի գործընթացում: Գործիքում ներկայացվում են գենդերային վերլուծության մոտեցումներ, ներառյալ գենդերային վերլուծության մի շարք գործիքներ, որոնք կարող են կիրառվել խորհրդարանականների կողմից:

Նկարում՝ Եվրոպական խորհրդարանի բոլոր կուսակցություններից բաղկացած Կանանց իրավունքների և գենդերային հավասարության հանձնաժողովի վեց անդամները, 2011 © Եվրոպական միություն, 2011 PE-EP/ Pietro Naj-Oleari:

5.1 Անվտանգության ոլորտի գենդերային վերլուծություն, ներառյալ բյուջեի ուսումնասիրում

Վերահսկողության գործընթացի մեջ գենդերային հարցերի ներառումը նշանակում է դիտարկել, թե ով է իրականացնում որևէ գործընթաց կամ քաղաքականություն, ինչպես է այն իրականացվում, ինչ նպատակով, և արդյոք տվյալ գործընթացը կամ քաղաքականությունը խթանում է գենդերային հավասարությունը:

Անվտանգության ոլորտի՝ գենդերային կարիքներին արձագանքող վերահսկողությունը ներառում է անվտանգության ոլորտի հետ կապված օրենքների, քաղաքականությունների և գործընթացների ուսումնասիրություն՝ ապահովելու համար, որ տղամարդկանց և կանանց (անկախ նրանց սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից և դրա արտահայտումից) անվտանգության կարիքները հաշվի են առնվում, և որ անվտանգության ոլորտի կառույցները հարգում, պաշտպանում և երաշխավորում են բոլորի, ներառյալ իրենց սեփական անձնակազմի, մարդու իրավունքները,

Սա անելու համար անհրաժեշտ են որոշ ըմբռնումներ, գիտելիքներ և հմտություններ: Նախևառաջ անհրաժեշտ է իրականացնել գենդերային վերլուծություն՝ քննադատական ուսումնասիրություն, թե ինչպես են գենդերային դերերի, գործողությունների, կարիքների, հնարավորությունների, իրավունքների տարբերությունները ազդում կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների վրա (անկախ նրանց սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից և դրա արտահայտումից) տվյալ քաղաքականության ոլորտում, իրավիճակում կամ համատեքստում*:

Հետևաբար՝ կարևոր է զարգացնել տղամարդ և կին խորհրդարանականների, հատկապես պաշտպանության և անվտանգության հարցերով հանձնաժողովների անդամների կարողությունները վերապատրաստումների և տեղեկացվածության բարձրացմանն ուղղված այլ նախաձեռնությունների միջոցով: Իսկապես, խորհրդարանները, որպես աշխատատեղեր, կարող են կարևորագույն վայր լինել «գենդերային հավասարությանն առնչվող հիմնական հարցերի քննարկման համար, ներառյալ աշխատավարձերը, առաջխաղացման հնարավորությունների հավասարությունը, ծնողական արձակուրդները, աշխատավայրում սեռական ոտնձգությունները և ավելի ճկուն աշխատանքային գրաֆիկի խթանումը՝ աշխատանքի և կյանքի միջև ավելի լավ հավասարակշռության և ծնողական պարտականությունների ավելի հավասար բաշխման նպատակով»2: Եթե խորհրդարանականներն ունենան նույնիսկ բազային գիտելիքներ գենդերային վերլուծության մասին, դա նրանց հնարավորություն կտա բարձրացնել կարևոր հարցեր և պահանջել համապատասխան տվյալներ:

Խորհրդարանականները պետք է նաև կարողանան իրենց աշխատակազմից և ուսումնասիրությունների բաժիններից ստանալ անհրաժեշտ աջակցություն գենդերային հարցերի ներառման համար: Խորհրդարանների ուսումնասիրությունների ծառայությունները կարող են ունենալ բոլոր անհրաժեշտ հմտությունները՝ տրամադրելու համար օբյեկտիվ, հստակ վերլուծություն, որը կօգնի խորհրդարանականներին անվտանգության ոլորտի բարդ խնդիրները վերահսկել՝ հաշվի առնելով գենդերային հարցերը:

Ֆիջիում ձևավորվել է գենդերային հարցերով զբաղվող խորհրդարանական հանձնաժողով՝ ապահովելու համար, որ գենդերային հարցերը հաշվի առնվեն բոլոր հանձնաժողովների աշխատանքներում և արտացոլվեն խորհրդարանին ներկայացվող բոլոր զեկույցների մեջ: Ավելին, Ֆիջիի խորհրդարանը ընդունել է «գենդերային գործիքակազմ»՝ օժանդակելու

համար հանձնաժողովի անդամներին բոլոր օրենքի նախագծերի, ներառյալ բյուջեի մասին օրենքի նախագծերը, գենդերային ազդեցության գնահատման իրականացման գործընթացում[3]: Գործիքակազմը շեշտում է ըստ սեռերի տարանջատված տվյալների հավաքագրման կարևորությունը: Ըստ խորհրդարանի խոսնակ Ջիկո Լուվենիի՝ «խորհրդարանի ընթացակարգը պահանջում է, որ խորհրդարանական հանձնաժողովներն օգտագործեն գենդերային վերլուծություն որևէ օրենքի նախագծի ուսումնասիրության կամ իրենց կողմից վերահսկողության գործառույթի իրականացման ժամանակ»[4]: Ֆիջիում իրականացված գենդերային վերապատրաստման նման վերապատրաստումները կարող են հանդիսանալ գործուն միջոց կին և տղամարդ խորհրդարանականների համար գենդերային հարցերին արձագանքող վերահսկողության կարևորությունը շեշտելու համար:

Գենդերային վերլուծության ձևերից մեկը «գենդերային աուդիտի» իրականացումն է: Խորհրդարանի աշխատանքներում բոլոր առաջարկվող և գոյություն ունեցող բյուջեների գենդերային աուդիտը օգնում է բացահայտել, թե գենդերային անհավասարությունն ինչ չափով է ազդում անվտանգության վրա, և ի հայտ բերել, թե տղամարդկանց, կանանց, տղաների և աղջիկների, ինչպես նաև տարբեր սեռական կողմնորոշում, գենդերային ինքնություն և արտահայտումներ ունեցող անձանց՝ անվտանգության հետ կապված որ առաջնահերթությունները կարիք ունեն ֆինանսավորման: Երբ խորհրդարանը քննարկում է ընդհանուր բյուջեն, այն պետք է գենդերային հավասարությունը սահմանի որպես առաջնահերթություն բյուջեի հետ կապված ընթացակարգերում: Այսպիսի ընթացակարգերը «ապահովում են, որ հատկացումները համապատասխանեն գենդերային հավասարության ոլորտում հանձնառություններին, մեծացնում են թափանցիկությունը և երաշխավորում, որ իրականացվող ծախսերը հանգեցնում են ցանկալի արդյունքի»[5]:

Գենդերային աուդիտը կարող է ստուգել, թե արդյոք անվտանգության ոլորտի բոլոր դերակատարների բյուջեներն արձագանքում են գենդերային խնդիրներին: Գենդերային խնդիրներին արձագանքող բյուջեն իր հերթին ուժեղացնում է խորհրդարանի վերահսկողական գործառույթի լեգիտիմությունը: Գենդերային աուդիտները պետք է հիմնված լինեն մասնակցային մեթոդաբանության վրա, որը.

- հաշվի է առնում, թե արդյոք գենդերային մեյնսթրիմինգին ուղղված ներքին գործընթացները և համապատասխան աջակցությունը արդյունավետ է և փոխադարձ ուժեղացնող,
- մոնիթորինգի է ենթարկում և գնահատում գենդերային մեյնսթրիմինգի ոլորտում արձանագրվող առաջընթացը
- սահմանում է աուդիտի ենթարկվող կառույցի համար ելակետային տվյալները
- ի հայտ է բերում կարևորագույն բացերը և մարտահրավերները
- տրամադրում է հանձնարարականներ այս բացերի և մարտահրավերների հաղթահարման համար և առաջարկում է նոր և արդյունավետ ռազմավարություններ
- արձանագրում է գենդերային հավասարությանը հասնելուն ուղղված դրական փորձը[6]:

Հարավային Աֆրիկան առաջին երկրներից մեկն էր, որն իր բյուջեի գործընթացում ներառեց գենդերային տեսանկյունը: 1995 թվականին երկրում տեղի ունեցած առաջին ժողովրդավարական ընտրություններից մոտ մեկ տարի անց ձևավորվեց Հարավային Աֆրիկայի Կանանց բյուջեի նախաձեռնությունը, որը հանդիսանում էր խորհրդարանականների և քաղաքացիական հասարակության մի քանի հաստատությունների համատեղ ջանքերի արդյունք: Կանանց բյուջեի նախաձեռնությունը գենդերային տեսանկյունից ուսումնասիրեց կառավարության բյուջեի բոլոր ոլորտային հատկացումները՝ բացահայտելու համար դրա տարբերակված ազդեցությունը կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների վրա:

Ուսումնասիրության հիմքում ընկած էր հանրային ծախսերի բոլոր տեսակների և եկամուտների ձևավորման մեթոդների վերլուծությունը՝ կանանց և աղջիկների համար ենթադրվող առավելությունների համատեքստում՝ տղամարդկանց և տղաների հետ համեմատությամբ: Նախաձեռնության առաջին փուլը կենտրոնանում էր չորս ոլորտների վրա՝ սոցիալական ապահովությունը, կրթությունը, բնակարանային ոլորտը և Վերակառուցման և զարգացման ծրագիրը: Երկրորդ փուլը ներառում էր այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են առողջապահությունը, արդարադատությունը, անվտանգությունը և ապահովությունը, ուղղիչ ծառայությունները, տրանսպորտը, ներքին և արտաքին գործերը, գյուղատնտեսությունը, հողօգտագործումը և էներգետիկան[7]: Կարևոր է, որ հաջողության գրավականը հանդիսանում էր խորհրդարանականների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև սերտ համագործակցությունը:

5.2 Խորհրդարանի գենդերային կառույցների ներգրավումը անվտանգության ոլորտի վերահսկողության մեջ

Ինչպես ներկայացվել է Բաժին 2-ում, խորհրդարանի վերահսկողական գործառույթը անվտանգության ոլորտի նկատմամբ հիմնականում կենտրոնացված է անվտանգության և պաշտպանության հարցերի հանձնաժողովներում: Դրանք կարող են հետաքննել անվտանգության ուժերի գործողությունները և տրամադրել հանրային հարթակ քաղաքական կուսակցություններին՝ անվտանգության քաղաքականության և գործունեության վերաբերյալ քննարկումներ իրականացնելու համար: Անվտանգության և պաշտպանության հարցերով խորհրդարանական հանձնաժողովները պետք է ակտիվորեն հաղորդակցվեն և համագործակցեն խորհրդարանի հատուկ գենդերային կառույցների՝ հիմնականում գենդերային հավասարության հարցերով հանձնաժողովի կամ կանանց խմբերի հետ:

2015 թվականի դրությամբ 116 երկրներում գործում էին 144 խորհրդարանական մարմիններ, որոնք ունեն գենդերային հավասարությանն ուղղված մանդատ: Այդպիսի մարմինների օրինակները ներառում են Տղամարդկանց և կանանց հավասար հնարավորությունների խորհրդակցական հանձնաժողովը Բելգիայում, Կանադայի Համայնքների պալատի Կանանց կարգավիճակի հարցերով մշտական հանձնաժողովը, Հնդկաստանի Կանանց հզորացման հանձնաժողովը, Իսպանիայի Հավասարության հարցերի հանձնաժողովը, Դոմինիկյան Հանրապետության Գենդերային հարցերի մշտական հանձնաժողովը, Հյուսիսային Մակեդոնիայի Ազգային ժողովի Հավասար հնարավորությունների հարցերի հանձնաժողովը, Մոնտենեգրոյի խորհրդարանի Գենդերային հավասարության հարցերի հանձնաժողովը, Շրի Լանկայի խորհրդարանի Կանանց և գենդերային հարցերի ոլորտային

վերահսկողության հանձնաժողովը, Դանիայի խորհրդարանի գենդերային հավասարության հանձնաժողովը, Ֆինլանդիայի Աշխատանքի և հավասարության հարցերի հանձնաժողովը, Բոսնիա և Հերցեգովինայի Ներկայացուցիչների պալատի Հավասար հնարավորությունների հանձնաժողովը, Գանայի խորհրդարանի Գենդերային հարցերի և երեխաների հարցերի հանձնաժողովը և Էլ Սալվադորի Կանանց խորհրդարանական խումբը: Այս հանձնաժողովների կարևորագույն դերերից է հանրային լսումների իրականացումը և քաղաքականության մշակման համար պատասխանատու համայնքի հետ խորհրդակցությունները՝ քաղաքականությունների, ծրագրերի և օրենսդրության՝ կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների վրա ունեցած ազդեցությունը որոշելու նպատակով: Օրինակ՝ Մոլդովայում Կանանց հանձնաժողովը փորձագիտական կարողությունների նպատակով դիմել է Գենդերային հավասարության հարթակին, որը բաղկացած է քաղաքացիական հասարակության 19 ականավոր կազմակերպություններից[8]:

Կանանց խմբերը խորհրդարաններում կարող են միավորել տարբեր քաղաքական կուսակցությունների պատկանող կանանց: Կանանց միջկուսակցական խմբերը գործում են մի շարք երկրներում, այդ թվում՝ Ալբանիայում, Բոսնիա և Հերցեգովինայում, Ղրղզստանում, Հյուսիսային Մակեդոնիայում, Լեհաստանում, Սլովակիայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում[9]: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կողմից ԵԱՀԿ տարածաշրջանում կին խորհրդարանականների կառույցների վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունը բացահայտել է, որ թեև տվյալ երկրում գոյություն ունեցող խորհրդարանական և քաղաքական համակարգի տեսակը ուղղակիորեն չի ազդում կանանց խորհրդարանական մարմինների ձևավորման վրա, սակայն քաղաքական միջավայրը կարող է ազդեցություն ունենալ այն բանի վրա, թե ինչպիսի մարմին կձևավորվի: Նմանապես, օրինական գենդերային քվոտաների առկայությունը կամ խորհրդարանում կանանց ընտրվելուն աջակցող կամավոր միջոցները ուղիղ ցուցիչ չեն հանդիսանում կանանց խորհրդարանական մարմնի ձևավորման հավանականության տեսանկյունից: Այդուհանդերձ, կանանց խորհրդարանական շատ մարմիններ կարևորագույն դեր են կատարել ընտրական օրենքներում գենդերային քվոտաների ընդգրկումը խթանելու ուղղությամբ, գենդերային քվոտաների տրամադրման հետ կապված փոփոխությունների խթանման ուղղությամբ և/կամ քվոտաների տրամադրման իրականացման մոնիթորինգի ուղղությամբ[10]: Կանանց խորհրդարանական խմբի լավ օրինակ է Էլ Սալվադորի խորհրդարանական և նախկին խորհրդարանական կանանց ասոցիացիան: Երբ Ասոցիացիան հիմնադրվեց, նախագահը Farabundo Martí «Ազգային ազատագրական ճակատ» կուսակցությունից էր, որը նախկին պարտիզանական շարժում էր, իսկ փոխնախագահը աջակողմյան «ARENA» կուսակցությունից էր և ներգրավված էր եղել 1980-ականներին պարտիզանների դեմ ուղղված մահապարտների ջոկատների գործողություններում: Այդ խումբը դարձավ խորհրդարանում կանանց և տղամարդկանց խորհրդանիշ՝ թշնամական կուսակցական պատկանելության տարանջատումներից անկախ երկխոսության հնարավորության առումով[11]: Ասոցիացիայի հիմնական նպատակն է կին խորհրդարանականների համար տրամադրել վերապատրաստումներ առաջնորդության ոլորտում[12]:

* ՄԻՊԱՀ-ների և գենդերային հավասարության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (2012) Մարդու իրավունքների պաշպանության ազգային հաստատությունների ձեռնարկ կանանց իրավունքների և գենդերային հավասարության մասին և DCAF, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԵԱՀԿ (2014) ուղեցույց Գենդերային հարցերի ներառումը Օմբուդս հաստատությունների և Մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների կողմից անվտանգության ոլորտի վերահսկողության գործընթացում:

5.3 Ներառական գործընթացներ, քաղաքացիական հասարակության հետ կապերի ստեղծում

Հանձնաժողովի կառուցվածքը կարևոր մեխանիզմ է, որի միջոցով խորհրդարանները կարող են քաղաքացիական հասարակությունից և այլ փորձագետներից ստանալ նրանց կարծիքները անվտանգության հարցերի վերաբերյալ: Կանանց խմբերի կամ գենդերային հավասարության հանձնաժողովի հետ համագործակցությունից բացի, պաշտպանության և անվտանգության հարցերի հանձնաժողովները և գենդերային հավասարության հանձնաժողովները պետք է կապեր հաստատեն կանանց կազմակերպությունների, գենդերային հարցերով փորձագետների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ, որոնք աշխատում են անվտանգության ոլորտում կամ զբաղվում են մարդու իրավունքներով:

Հանձնաժողովները պետք է ապահովեն, որ տարբեր խմբերի հետ տեղի ունենան խորհրդակցություններ (տես՝ Ներդիր 8): Խորհրդարանները կարող են օգտագործել քաղաքացիական հասարակության հետ համագործակցելու տարբեր եղանակներ, ինչպիսիք են ազգային երկխոսությունների կազմակերպումը, հանրային խորհրդակցությունների կազմակերպումը, ներառյալ օրենքների նախագծերի վերաբերյալ հանրային խորհրդարանական լսումները և փորձագետների կողմից իրականացվող ներկայացումները: Օրինակ՝ Ավստրիայում ՍՊԲ-ին արձագանքելու եղանակներից մեկը եղել է Գենդերային հարցերի հանձնաժողովի քննարկումների մեջ քաղաքացիական հասարակության ներգրավումը: 2018 թվականին հանձնաժողովն իրականացրեց հատուկ նախաձեռնություն ՍՊԲ դեմ պայքարելու նպատակով, որը համակարգվում է ոչ պետական ոլորտի հետ՝ ներառելով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների տեսակետները[13]:

Ներդիր 8. Բազմազան և ներառական խորհրդակցությունների իրականացում

Տղամարդկանց և կանանց բազմազան խմբերի ներկայացուցիչները, ներառյալ ԼԳԲՏԻ անձինք, պետք է հնարավորություն ունենան մասնակցելու օրենսդրական բարեփոխումների գործընթացներին և անվտանգության ոլորտի վերահսկողությանը: Սա կարևոր է՝ ապահովելու համար, որ համայնքի բազմազան կարիքներն ի հայտ կբերվեն և կբավարարվեն: Այս առումով կարևոր է հիշել, որ ո՛չ կանայք, ո՛չ տղամարդիկ, ո՛չ ԼԳԲՏԻ անձինք համասեռ խմբեր չեն, հետևաբար՝ անհրաժեշտ է ներգրավել բազմազան խմբերի՝ նրանց բազմազան փորձառությունները, կարիքները և տեսակետներն ի հայտ բերելու և դրանով բարեփոխումներին նպաստելու նպատակով:

Օրենսդրական բարեփոխումների և անվտանգության ոլորտի վերահսկողության գործընթացներում բազմազան խմբերի ներկայացուցիչների մասնակցությունը պետք է լինի.

- համապարփակ՝ ընդգրկելով բավարար քանակությամբ մասնակիցների,
- իմաստավորված՝ որոշումների կայացման և ազդեցություն ունենալու մակարդակով,
- տեղի ունենա ամբողջ գործընթացի ընթացքում՝ բարեփոխումների գաղափարի ձևավորումից մինչև դրանց իրականացումը և գնահատումը:

Պետք է ակտիվորեն խուսափել ձևական ներգրավվածությունից (միայն փոքր թվով «բազմազան անձանց» ներգրավվածությունը՝ որպես ներառականության ձևական արտահայտում) կամ մարդկանց ներգրավումից այն բանից հետո, երբ կարևոր որոշումներն արդեն ընդունվել են:

Խորհրդարանի վերահսկողության գործառույթը կարող է ներառել քաղաքացիական հասարակության կազմակերպություններից և կանանց տարբեր ասոցիացիաներից կանոնավոր կերպով տեղեկատվության ստացումը, որը վերաբերում է տվյալ ոլորտում կանանց կարգավիճակին և նրանց հուզող ընթացիկ խնդիրներին: Անհրաժեշտության դեպքում տուժածների իրավունքների պաշտպանության և այլ կազմակերպությունները նույնպես կարող են ներգրավվել խորհրդակցությունների մեջ: Քաղաքացիական հասարակության հետ այսպիսի խորհրդակցությունները խորհրդարաններին դարձնում են ավելի ներկայացուցչական և վերահսկողության գործընթացը դարձնում են ավելի արդյունավետ: Ստացված տեղեկատվության հիման վրա խորհրդարանները կարող են հարցեր բարձրացնել գործադիրին և անհրաժեշտության դեպքում ընդունել օրենքներ չարաշահումներին արձագանքելու համար:

5.4 Խորհրդարանների և մարդու իրավունքների ազգային հաստատությունների և օմբուդս հաստատությունների միջև համագործակցությունը անվտանգության ոլորտի գործուն վերահսկողության ապահովման նպատակով

Ինչպես ներկայացվել է Բաժին 2-ում, ՄԻՊԱՀ-ները և օմբուդս հաստատությունները կարևոր դեր են խաղում անվտանգության ոլորտի կառույցներին մոնիթորինգի ենթարկելու գործում: Նրանք հանրությունից և/կամ անվտանգության ոլորտի աշխատակիցներից ստանում և քննում են բողոքներ և մշակում են զեկույցներ և հանձնարարականներ: Շատ երկրների անվտանգության ոլորտի կառույցներում սեռով պայմանավորված բռնությունը գերակշռում է և կարող է ներառել կալանավորված անձանց կամ հանցագործություններից տուժած անձանց նկատմամբ բռնություն, կամ անձնակազմի ընտանիքի անդամների նկատմամբ կամ համայնքի այլ ներկայացուցիչների նկատմամբ չարաշահումներ: ՄԻՊԱՀ-ների և օմբուդս հաստատությունների կողմից հետաքննությունները և հաշվետվությունները կարող են օգնել բացահայտել և կանխել անվտանգության ոլորտի ներսում կամ ոլորտի ներկայացուցիչների կողմից խնդրահարույց վարքը, արձագանքել դրան, ինչպես նաև ի հայտ բերել այդ կառույցների ինստիտուցիոնալ խնդիրները: Այս առումով ՄԻՊԱՀ-ները կամ օմբուդս հաստատությունները կարող են դիտվել որպես կարևոր գործընկեր խորհրդարանի կողմից վերահսկողական գործառույթի իրականացման համար: Անվտանգության ոլորտի վերահսկողության իրականացման ընթացքում դրանք ուսումնասիրում են բողոքներ, բարձրացնում են մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ տեղեկացվածությունը և ապահովում են համապատասխանությունը ազգային քաղաքականությանը և օրենքի գերակայության պահանջներին:

Որևէ երկրի ՄԻՊԱՀ-ների, օմբուդս հաստատությունների և խորհրդարանի միջև համագործակցությունը կարող է լինել գործուն մեխանիզմ գենդերային հավասարության առաջխաղացման և ՍՊԲ-ին արձագանքելու համար: Երկրների մեծ մասում ՄԻՊԱՀ-ները և օմբուդս հաստատությունները տարեկան հաշվետվություն են ներկայացնում խորհրդարանին: Նրանց կողմից ներկայացված հաշվետվությունները պարունակում են մարդու իրավունքների հետ կապված հիմնական խնդիրների ներկայացում՝ հատուկ շեշտ դնելով պետական կառույցների կողմից մարդու իրավունքների խախտումների հանգեցնող գործողությունների վրա: Նրանք խորհրդարանական հանձ-

նաժողովներին տեղեկատվություն են տրամադրում «ծառայությունների ներսում ընդհանուր իրավիճակի և անձնակազմի բարոյական վիճակի վերաբերյալ»[14]: Նրանք կարող են հորդորել խորհրդարանին կանխարգելել կամ շտկել մարդու իրավունքների չարաշահումների հետ կապված իրավիճակները համապատասխան օրենսդրություն նախաձեռնելու միջոցով, օրինակ՝ հորդորելով, որ խորհրդարանն ընդունի գենդերային խնդիրների նկատմամբ զգայուն օրենքներ, որոնք հաշվի են առնում կանանց և տղամարդկանց տարբեր կարիքները և փորձառությունները:

Խորհրդարանները կարող են օգտագործել ՄԻՊԱՀ-ների և օմբուդս հաստատությունների կողմից տրամադրվող տեղեկությունները չարաշահումների վերաբերյալ լսումներ սկսելու նպատակով և կարող են խնդրել այդ հաստատություններին հաշվետվություններ ներկայացնել հատուկ խնդիրների վերաբերյալ, ինչպիսիք են, օրինակ, կանանց և աղջիկների կարիքները*:

Վրաստանի Հանրային պաշտպանի գրասենյակի Գենդերային հավասարության վարչությունը լավ օրինակ է, թե ինչպես է օմբուդս հաստատությունը աշխատում բոլոր քաղաքացիների, հատկապես քաղաքացիների խոցելի խմբերի, ինչպիսիք են կանայք և ԼԳԲՏԻ համայնքը, մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ուղղությամբ: Կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ հանձնակատարը Վրաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում կրկնել է իր կոչը բոլոր երկրներին՝ ստեղծելու «ֆեմիցիդի վերահսկման» կամ «կանանց՝ գենդերով պայմանավորված սպանությունների վերահսկման» մարմիններ: Նա բացատրել է, որ դրա նպատակն է «հավաքագրել և հրապարակել (տարեկան) տվյալներ (իրականացված) ֆեմիցիդի թվերի վերաբերյալ և ստեղծել նոր կամ առկա կառույց՝ ֆեմիցիդի յուրաքանչյուր դեպքն ուսումնասիրելու համար, որպեսզի հնարավոր լինի ի հայտ բերել պաշտպանության ձախողումները ֆեմիցիդի կանխարգելմանն ուղղված պաշտպանիչ միջոցների բարելավման նպատակով»[15]:

2017 թվականի ապրիլին Վրաստանի Հանրային պաշտպանը ստանձնեց կանանց՝ գենդերով պայմանավորված սպանությունների մոնիթորինգի պատասխանատվությունը: 2018 թվականին Հանրային պաշտպանը խորհրդարանին ներկայացրեց իր կողմից իրականացված մոնիթորինգի նախնական արդյունքները՝ 2016 թվականին տեղի ունեցած ֆեմիցիդի վեց դեպքերի և չորս փորձերի վերլուծությունը: Հանրային պաշտպանի վերլուծությունը ի հայտ էր բերել բացեր տվյալների հավաքագրման ոլորտում, որոնք կարևոր էին տուժածների պաշտպանության հարցում խնդիրներին արձագանքելու համար: Վերլուծության մեջ նաև կոչ էր արվում Քրեական օրենսգրքի մեջ ներմուծել «ֆեմիցիդ» տերմինը՝ հանցագործության օրինական ձևակերպումը հեշտացնելու նպատակով, ուժեղացնել պատժամիջոցների համաչափությունը և բարելավել տուժածների պաշտպանության համակարգը[16]:

2019 թվականին ԵԱՀԿ քարտուղարության Հակամարտությունների կանխարգելման կենտրոնը և Ժողովրդավարական հաստատությունների գրասենյակը նախաձեռնեցին մի գործընթաց, որն ուղղված էր միջգործակալական հարթակի ստեղծմանը, որտեղ վերահսկողական մարմինները կարող են քննարկել Հայաստանի Հանրապետության անվտանգության ոլորտի կառավարման և բարեփոխման հետ կապված հարցեր: Հարթակի նպատակն է միավորել վերահսկողություն իրականացնող մարմիններին

(Ազգային ժողով, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ) անվտանգության և արդարադատության ոլորտների հաստատությունների հետ (Ազգային անվտանգության խորհուրդ, պաշտպանության նախարարություն, ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն, Քննչական կոմիտե, դատախազություն և Հատուկ քննչական ծառայություն): Այն ներառում է նաև Բարձրագույն դատական խորհուրդը: Գենդերային հարցերի ներառումը անվտանգության շրջանակներում կանոնավոր կերպով կվերանայվի հարթակի կողմից:

5.5 Խորհրդարանում գենդերային հավասարության հասնելը

Կանանց թերներկայացվածությունը խորհրդարանների մեծ մասում քննարկվում է Բաժին 3-ում՝ կանանց և տղամարդկանց ներկայացվածության կարևորության համատեքստում խորհրդարանի լեգիտիմության և վերահսկողության որակի տեսանկյունից: Խորհրդարանական վերահսկողության մեջ գենդերային տեսանկյունը ներառելու համար կարևոր ռազմավարություններ են խորհրդարանի անդամության կին թեկնածուների և խորհրդարան ընտրված կանանց թվի ավելացումը, ինչպես նաև ընտրվելուց հետո խորհրդարանի ներսում կանանց կողմից առաջնորդության պաշտոնների զբաղեցման ապահովումը: Կին խորհրդարանականների 30 տոկոսանոց այսպես կոչված «կրիտիկական զանգվածը» լայնորեն ընդունված նվազագույն չափորոշիչ է: Բացի դրանից՝ խորհրդարանի պատգամավորների թեկնածուների ցանկը պետք է ներառի ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների, ինչպես նաև այլ ավանդաբար ոչ բավարար կերպով ներկայացված խմբերի, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող կանայք և երիտասարդ կանայք:

Ինչպես նշվում է Բաժին 3-ում, ամբողջ աշխարհում վերջին երկու տասնամյակների ընթացքում տեղի է ունեցել զգալի բարելավում խորհրդարաններում կանանց մասնակցության առումով: Այս առաջընթացը մեծ չափով մի շարք հատուկ ժամանակավոր միջոցների արդյունք էր, ինչպիսիք են քվոտաների կամ ամրագրված տեղերի հատկացումը: Ինչպես նշել է CEDAW հանձնաժողովը, քվոտաները և ամրագրված տեղերը չպետք է դիտարկվեն որպես խտրականություն տղամարդկանց նկատմամբ: Դրանք հանդիսանում են ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են պատմական անհավասարությունների և միտումների շտկմանը[17]: Այս միջոցների արդյունավետությունը և ազդեցությունը տարբեր են լինում: Օրինակ՝ Ղրղզստանում և Իռլանդիայում քվոտաներն ունեցել են դրական արդյունք: Սակայն ժամանակավոր հատուկ միջոցները կարող են արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ դրանք ձևակերպվում և իրականացվում են արդյունավետ կերպով, գոյություն չունի որևէ ունիվերսալ մոդել, որը հարմար է բոլոր երկրների համար[18]: Օրենսդրական քվոտաները, թեև պարտադիր են իրականացման համար, միշտ չէ, որ հանգեցնում են ցանկալի արդյունքների՝ ընտրված կանանց թվի առումով: Միևնույն ժամանակ, կուսակցությունների ներսում սահմանվող քվոտաները, թեև կամավոր միջոց են, սակայն ավելի արդյունավետ են եղել որոշ երկրներում կանանց ավելի բարձր ներկայացվածության հասնելու առումով:

Կանանց թվի վերաբերյալ քննարկումների ժամանակ երբեմն ավելի քիչ ուշադրություն է դարձվում արդյունքին, այն է՝ խորհրդարաններում կանանց մասնակցության՝ գենդերային հավասարության վրա ունեցած

ազդեցությանը: Խորհրդարանները հաճախ «ունեն քարացած նորմեր, մոտեցումներ և քաղաքականություններ, որոնք խտրական վերաբերմունք են դրսևորում կանանց նկատմամբ, ինչն էլ դժվարացնում է կանանց համար փոփոխությունների հասնելը»[19]: Օրինակ՝ կին խորհրդարանականների համամասնության բարելավումը միշտ չէ, որ հանգեցնում է կանանց ներգրավվածությանը անվտանգության ոլորտում որոշումների կայացման գործընթացներում, ինչպես օրինակ՝ նախարարական կամ պաշտպանության և ոստիկանության հարցերով զբաղվող հանձնաժողովներում բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնելուն (տես՝ Ներդիր 9): Օրինակ՝ 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ կանայք զբաղեցնում էին 1,412 նախարարական պաշտոններ, որոնցից 22-ը պաշտպանության և/կամ վետերանների հետ կապված պաշտոններ էին, 50-ը՝ ներքին գործերի և/կամ ներգաղթի և 31-ը արդարադատության[20]: Միևնույն ժամանակ, խորհրդարանների մեծամասնության գենդերային հավասարության հարցերով հանձնաժողովների մեծ մասի անդամները կանայք են: Բազմազան անդամություն ունեցող հանձնաժողովները, սակայն, ավելի լավ կարող են հասկանալ իրենց ընտրողների՝ գենդերով պայմանավորված անվտանգության կարիքները: Այսպիսի ուժեղացված ըմբռնումն իր հերթին ուժեղացնում է այդ հանձնաժողովների լեգիտիմությունը:

Գենդերային հավասարության՝ խորհրդարանական աշխատանքի համար որպես արժեք ընկալվելու համար տղամարդ և կին խորհրդարանականները պետք է համատեղ աշխատեն՝ վերափոխելով ինստիտուցիոնալ մշակույթը և հաղթահարելով տևական ժամանակ գոյություն ունեցած նախապաշարմունքները: Տղամարդ պատգամավորների համար կարող են իրականացվել խրախուսիչ միջոցառումներ, որպեսզի նրանք ավելի մեծ թվերով մասնակցեն գենդերային հավասարության հարցերով հանձնաժողովներում: Կին պատգամավորներին կարող են առաջնահերթություններ տրվել՝ մասնակցելու այն հանձնաժողովների աշխատանքներին, որոնցում կանայք բավարար կերպով ներկայացված չեն, ներառյալ պաշտպանության և անվտանգության ոլորտների վերահսկողության մանդատ ունեցող հանձնաժողովները:

Այդուհանդերձ, սխալ կլիներ ենթադրել, որ կին խորհրդարանականներն ավտոմատ կերպով ընդունում են գենդերային խնդիրներին ավելի լավ արձագանքող և գենդերային հարցերի նկատմամբ ավելի ներառական մոտեցում անվտանգության ոլորտի վերահսկողության առումով: Թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ ունեն բնորոշ գենդերային նախապաշարմունքներ և կարող են հավասարապես անտեղյակ լինել այն համայնքների անվտանգության կարիքների և խոցելիությունների մասին, որոնց հետ իրենք չունեն անձնական շփումներ: Թեև քվոտաները և խորհրդարաններում ու հանձնաժողովներում գենդերային հավասարակշռությանն ուղղված այլ միջոցները կարևոր առաջին քայլ են, անհրաժեշտ է, որպեսզի խորհրդարանական բոլոր հանձնաժողովների անդամները ստանան կարողությունների բարձրացմանն ուղղված աջակցություն՝ իրենց գենդերային նախապաշարմունքները հաղթահարելու, կանանց, տղամարդկանց, տղաների և աղջիկների անվտանգության հետ կապված կարիքների և խոցելիությունների մասին ավելի լավ իրազեկվելու համար:

Ներդիր 9. Ավստրիայի խորհրդարանի Դաշնային զինված ուժերի հարցերի հանձնաժողովը

Ավստրիան հանդիսանում է հանձնաժողովի կողմից իրականացվող վերահսկողության մարտահրավերների և արձանագրված առաջընթացի լավ օրինակ: Ավստրիայի խորհրդարանի Դաշնային զինված ուժերի հարցերի հանձնաժողովը հանդիսանում է Ավստրիայի իրավական համակարգի ռազմական ոլորտում ժողովրդավարական սկզբունքի օրինակ: Այս հաստատությունը Ավստրիայի խորհրդարանի Ազգային խորհրդի անկախ մոնիթորինգային մարմին է: Հանձնաժողովն ի սկզբանե գլխավորում էր պաշտպանության նախարարը, ինչը զգալիորեն սահմանափակում էր դրա անկախությունը: Սակայն տարիների ընթացքում այն վերափոխվեց անկախ մարմնի, որն այլևս ենթակա չէ նախարարի կողմից ուղղորդման: Այժմ նույնիսկ երբ հանձնաժողովի անդամները կորցնում են իրենց տեղը խորհրդարանում, նրանք շարունակում են ծառայել հանձնաժողովում իրենց ամբողջ վեցամյա ժամկետով:

2016 թվականին Հանձնաժողովը սկսեց հատուկ գենդերային նախաձեռնություն, որի նպատակն էր գենդերային մեյնսթրիմինգ իրականացնել զինված ուժերի համակարգում: Հատուկ կարևորություն էր տրվում կանանց՝ որոշումների կայացման համար պատասխանատու պաշտոններում առաջխաղացման հնարավորություններին: Ավստրիան ունի զորակոչային բանակ, որին զորակոչվելու իրավունք կանանց տրվել է միայն վերջին երկու տասնամյակների ընթացքում: 1998 թվականից ի վեր կանայք հնարավորություն են ունեցել որպես կամավոր ծառայելու զինված ուժերում: 2018 թվականին կանայք կազմում էին զինված ուժերի 10-13 տոկոսը:

2018 թվականին Հանձնաժողովում գերակշռում էին տղամարդ պատգամավորները: Նախագահներից ոչ մեկը կին չէր, իսկ անդամներից միայն երկուսն էին կանայք: Հանձնաժողովի սահմանափակ բազմազանությունը բացատրվում է այն հանգամանքով, որ Ավստրիայի քաղաքական կուսակցությունները որպես պաշտպանության ոլորտի թեկնածու հիմնականում առաջադրում են իրենց խոսնակներին: Նրանք էլ հիմնականում տղամարդիկ են: Ուստի անհրաժեշտ է, որ փոփոխվի ինստիտուցիոնալ մշակույթը, որպեսզի հանձնաժողովը կարողանա ավելի լավ արձագանքել գենդերային խնդիրներին:

Աղբյուրներ. «Ավստրիայի խորհրդարանի Դաշնային զինված ուժերի հարցերի հանձնաժողով», Ավստրիայի խորհրդարանի կայք, հարցազրույց խորհրդարանի պատգամավոր, Ավստրիայի խորհրդարանի Դաշնային զինված ուժերի հարցերի հանձնաժողովի գործադիր տնօրեն Մայքլ Հեմերի հետ, Ավստրիա, 9 հոկտեմբերի, 2018թ., հարցազրույց Ավստրիայի խորհրդարանի Դաշնային զինված ուժերի հարցերի հանձնաժողովի անդամ և Գենդերային հավասարության հարցերով խորհրդարանական հանձնաժողովի նախագահ Գիզելա Վուրմի հետ (2008-2017), Ավստրիա, 13 հոկտեմբերի, 2018թ., հարցազրույց Ավստրիայի խորհրդարանի Դաշնային զինված ուժերի հարցերի հանձնաժողովի տնօրեն, խորհրդարանի պատգամավոր Օտտո Փենդլի հետ, Ավստրիա, 13 հոկտեմբերի, 2018թ:

Ծանոթագրություններ

1. ՄԱԶԾ (2016) Ուղեցույց. Խորհրդարաններում գենդերային հավասարության արդյունքների խթանման ռազմավարություններ և դրական փորձ, Նյու Յորք: ՄԱԶԾ, էջ 5:
2. Մ. Կաուֆման (2014) «Ներգրավելով տղամարդկանց, փոխելով գենդերային նորմերը. Գենդերային փոփոխությունների գործողությունների ուղեցույց», MenEngage և UNFPA պաշտպանության ամփոփագիր, էջ 10:
3. Ջ. Սավիկե (2018) «Ֆիջիի խորհրդարանը խթանում է գենդերային հավասարությունը», Fiji Times, 4 դեկտեմբերի, https://www.fijitimes. com/fijian-parliament-to-champion-gender-equality.
4. ՄԱԶԾ (ժամկետ նշված չէ) Օրենսդրության ուսումնասիրությունը գենդերային տեսանկյունից. Գործնական գործիքակազմ, Սուվա: ՄԱԶԾ, էջ 3:
5. Ա. Ֆոֆանա Իբրահիմ, Ա. Սիվալի Մբայո և Ռ. Մաքքարթի «Գենդերի ներառումը անվտանգության ոլորտի բարեփոխումների և կառավարման գործընթացում», Օ. Մոդերան և Լ. Բոսթրոմ (խմբ.) Արևմտյան Աֆրիկայում անվտանգության ոլորտի բարեփոխման և կառավարման գործիքների ժողովածու, Ժնև: DCAF, ծանոթություն 57, էջ 76:
6. Աշխատանքի միջազգային գրասենյակ (2012) Գենդերային աուդիտի ձեռնարկ. ԱՄԳ մասնակցային գենդերային աուդիտի մեթոդաբանություն, Ժնև: ԱՄԳ, էջ 10:
7. DCAF (2011) «Գենդերը և անվտանգության ոլորտի բարեփոխումները. օրինակներ երկրներից», Ժնև: DCAF, էջ. 65:
8. ՄԱԶԾ, ծանոթություն 1, էջ 5-6:
9. Ibid., էջ 8:
10. «ԵԱՀԿ տարածաշրջանում կին խորհրդարանականների կառույցների համեմատական ուսումնասիրություն», Վարշավա, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ:
11. Հեռախոսային հարցազրույց Սալվադորի խորհրդարանի անդամ Նիդիա Դիազի հետ (FMLN), 3 մարտի, 2019թ., հարցազրույց Սալվադորի խորհրդարանի անդամ Գլորիա Սալգերո Գրոսի հետ (ARENA), Սան Սալվադոր, Էլ Սալվադոր, 7 մարտի, 2014թ.:
12. Հարցազրույց Սալվադորի խորհրդարանի անդամ Նիդիա Դիազի հետ, 3 մարտի, 2019թ.:
13. Հեռախոսային հարցազրույց Ավստրիայի խորհրդարանի Դաշնային զինված ուժերի հարցերի հանձնաժողովի անդամ, Գենդերային հավասարության հարցերի խորհրդարանական հանձնաժողովի նախագահ Գիզելա Վուրմի հետ 2008–2017), Ավստրիա, 13 հոկտեմբերի, 2018թ.:
14. Վ. Ֆ. Վան Էէկելեն (2010) «Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողությունը. ազգային և միջազգային խորհրդարանական տեսանկյունները», Հ. Բորն, Պ. Ֆլուրի և Ս. Լուննն (խմբ.) Խորհրդարանական վերահսկողության կարևորությունը անվտանգության ոլորտի համար, Ժնև, DCAF, էջ 58:
15. ՄԱԿ-Կանայք կառույց, Վրաստան (2018) «Վրաստանում կանանց իրավունքների համար պայքարողները պահանջում են ավելի խիստ արձագանք ֆեմիցիդին», 17 մայիսի, http://georgia.unwomen.org/en/news/stories/2018/05/womens-rights-advocates-in-georgia-call-for-tougher-response-to-femicide.
16. Ibid.
17. Ընդհանուր հանձնարարական No. 25, Հոդված 4, պարբերություն 1, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր տեսակների վերացման կոնվենցիա, հատուկ ժամանակավոր միջոցներ:
18. Օրինակ՝ Ի. Լուչիակ (2009) Գենդերը և ժողովրդավարությունը Կուբայում, Գեյնսվիլ, Ֆլորիդա: Ֆլորիդայի համալսարանի հրատարակչություն:
19. ՄԱԶԾ, ծանոթություն 1, էջ 1:
20. «Քաղաքականության մեջ կանանց քարտեզ», https://www.ipu.org/resources/publications/infographics/2019-03/women-in-politics-2019, ՄԱԿ-Կանայք (2015) «Հակամարտությունների կանխարգելումը, արդարադատության վերափոխումը, անվտանգության ապահովումը. Անվտանգության խորհրդի 1325 բանաձևի իրականացման համաշխարհային ուսումնասիրություն», Նյու Յորք: ՄԱԿ-Կանայք, Մ. Բասթիք (2018) «Գենդերը և անվտանգության ոլորտի բարեփոխումը» Ք. Է. Ջենթրի, Լ. Ջ. Շեփարդ և Լ. Սյոբերգ (խմբ.) Գենդերի և անվտանգության Ռութլեջի ձեռնարկ, Լոնդոն: Ռութլեջ:

United Nations
Secretary-General's Campaign
UNiTE
to END VIOLENCE AGAINST WOMEN
ASIA-PACIFIC
strong hands stop violence against women and girls
Connect with us
FACEBOOK.COM/SAYNO.UNITE
TWITTER.COM/SAYNO_UNITE
ENDVIOLENCE.UN.ORG

6. Անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողության գործընթացում գենդերային տեսանկյունների ներառման հիմնական հանձնարարականներ

- Իրականացնել անվտանգության ոլորտին առնչվող օրենսդրության գենդերային վերլուծություն և ուժեղացնել գենդերային հարցերին արձագանքող բյուջեներին ուղղված նախաձեռնությունները:
- Հզորացնել խորհրդարանների կին և տղամարդ անդամների գենդերային կարողությունները, հատկապես պաշտպանության և անվտանգության հարցերի հանձնաժողովներում, վերապատրաստումների և իրազեկման բարձրացման այլ միջոցառումների միջոցով:
- Աջակցել անվտանգության ոլորտում գենդերային հավասարության խթանմանն ուղղված միջազգային և տարածաշրջանային պայմանագրերի և կոնվենցիաների ստորագրմանը, վավերացմանը և լիարժեք իրականացմանը, ինչպիսիք են Կանանց նկատմամբ խտրականության բոլոր տեսակների վերացման ՄԱԿ-ի կոնվենցիան:
- Ընդունել արդյունավետ օրենսդրություն՝ արձագանքելու համար կանանց և աղջիկների, տղամարդկանց և տղաների, ինչպես նաև տարբեր կողմնորոշում ունեցող անձանց դեմ ուղղված գենդերով պայմանավորված բռնությանը, հատուկ ուշադրություն դարձնելով նրանց տարիքին, հաշմանդամությանը, սեռական կողմնորոշմանը, գենդերային ինքնությանը և արտահայտումներին:
- Անվտանգության ոլորտի վերահսկողության գործընթացում ներառել գենդերային հարցերով հանձնաժողովին և կանանց խորհրդարանական խմբերին:
- Հասնել խորհրդարանի ներսում գենդերային հավասարության հատուկ ժամանակավոր միջոցների իրականացման միջոցով, ինչպիսիք են քվոտաները, ընտրական համակարգերի բարեփոխումները և քաղաքական կուսակցությունների և կին թեկնածուների համար կարողությունների բարձրացումը:
- Բարձրացնել կին խորհրդարանականների ներկայացվածությունը պաշտպանության և անվտանգության հարցերով զբաղվող հանձնաժողովներում:
- Ներգրավել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, հատկապես կանանց խնդիրներով զբաղվող կազմակերպություններին, անվտանգության ոլորտին առնչվող քաղաքականության մշակման գործընթացներում՝ լայնածավալ խորհրդակցությունների, հանրային լսումների և այլ պաշտոնական և ոչ պաշտոնական մեխանիզմների միջոցով:
- Համագործակցել օմբուդս հաստատությունների և մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների հետ խորհրդարանի աշխատանքներում գենդերային մեյնսթրիմինգ իրականացնելու համար:
- Պահանջել, մոնիթորինգի ենթարկել և վերահսկել Կանանց, խաղաղության և անվտանգության գործողությունների ազգային պլանները:

Նկարում՝ Ֆիջիի խորհրդարանում Գենդերով պայմանավորված բռնության դեմ 16-օրյա գործողություններին նվիրված ընդունելության մասնակիցները, 2014 © ՄԱԿ-Կանայք/Սերեանա Նարայան

7. Լրացուցիչ աղբյուրներ

Կայքեր

DCAF https://www.dcaf.ch

Ես գիտեմ քաղաքականություն www.iknowpolitics.org

Միջազգային զարգացման հետազոտությունների կենտրոն www.idrc.ca

Ժողովրդավարության և ընտրական աջակցության միջազգային ինստիտուտ www.idea.int
Միջխորհրդարանական միություն (ՄԽՄ) www.ipu.org
ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ https://www.osce.org/odihr/gender-equality ՄԱԿ-Կանայք կառույց www.unwomen.org
Համաշխարհային բանկի տվյալները խորհրդարաններում կանանց ներգրավվածության մասին
https://data.worldbank.org/ indicator/SG.GEN.PARL.ZS

Ուղեցույցներ և ձեռնարկներ

Ագուջա Մարիո և Հանս Բորն (խմբ.) (2017) Խորհրդարանի դերը ոստիկանության կառավարման գործընթացում. Ասիայի և Եվրոպայի երկրների փորձից քաղված դասեր, Ժնև: DCAF:

Բասթիք Մեգան (2014) Օմբուդս հաստատությունների և մարդու իրավունքների ազգային հաստատությունների կողմից գենդերային տեսանկյունների ներառումը անվտանգության ոլորտի վերահսկողության գործընթացում, Ժնև: DCAF, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, ԵԱՀԿ:

Բասթիք Մեգան (2015) Գենդերը և բողոքների մեխանիզմները. ձեռնարկ զինված ուժերի և օմբուդս հաստատությունների համար՝ գենդերի հետ կապված խտրականությունը, ոտնձգությունները, բուլինգը և չարաշահումները կանխարգելու և դրան արձագանքելու համար, Ժնև: DCAF:

Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտ (2019) Գործիքների ժողովածու գենդերային հարցերի նկատմամբ զգայուն խորհրդարանների համար www. Eige.europa.eu/gender-mainstreaming/toolkits/gender-sensitive-parliaments (ընթերցվել է 1 սեպտեմբերի, 2019թ.):

Ջենթրի Քերոն Է., Լորա Ջ. Շեփարդ և Լորա Սյոբերգ (խմբ.) (2018) Գենդերի և անվտանգության Ռութլեջի ձեռնարկ, Լոնդոն: Ռութլեջ:

Նկարում՝. Հանրության անդամները տոնում են կանանց նկատմամբ գենդերով պայմանավորված բռնության կանխարգելման և վերացման մասին օրենքի ընդունումը Էկվադորի Ազգային ժողովի կողմից, 2017 © Ալեքսանդր Մոյա/ Asamblea Nacional del Ecuador:

Իբրահիմ Աիշա Ֆոֆանա, Ալեքս Սիվալի Մբայո և Ռոզալին Մաքքարթի (2015) «Գենդերի ներառումը անվտանգության ոլորտի բարեփոխումների և կառավարման գործընթացում», Օռնելա Մոդերան (խմբ.) Արևմտյան Աֆրիկայում անվտանգության ոլորտի բարեփոխման և կառավարման գործիքների ժողովածու, Ժնև: DCAF:

Ջոհանսեն Ագնետա Մ. (2009) «Անվտանգության ոլորտի վերահսկողության և գենդերի վերաբերյալ վերապատրաստման նյութեր», Մեգան Բասթիք և Քրիսթին Վալասեք (խմբ.) Գենդերի և անվտանգության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ վերապատրաստումների նյութերի ժողովածու, Ժնև: DCAF:

Մոդերան Օռնելա և Լիզա Բոսթրոմ (խմբ.) (2015) Արևմտյան Աֆրիկայում անվտանգության ոլորտի բարեփոխման և կառավարման գործիքների ժողովածու, Ժնև: DCAF:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (2017) Աշխատացնելով օրենքը կանանց և տղամարդկանց համար. գենդերային հարցերի նկատմամբ զգայուն օրենսդրության գործնական ուղեցույց, Վարշավա, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ:

Փալմիերի Սոնյա (2011) Գենդերային հարցերի նկատմամբ զգայուն խորհրդարաններ. դրական փորձի համաշխարհային ուսումնասիրություն, Ժնև: ՄԽՄ:

ՄԱԶԾ (2016) Խորհրդարաններում գենդերային հավասարության խթանմանն ուղղված ռազմավարությունների և դրական փորձի ուղեցույց, Նյու Յորք: ՄԱԶԾ:

ՄԱԶԾ և Խորհրդարանականները հանուն համաշխարհային գործողությունների (2017) Խթանելով ԼԳԲՏԻ անձանց մարդու իրավունքները և ներառումը. ձեռնարկ խորհրդարանականների համար, Նյու Յորք: ՄԱԶԾ:

ՄԱԿ Ընդհանուր վեհաժողով (2015) Վերափոխելով աշխարհը. Կայուն զարգացման 2030 օրակարգ, Նյու Յորք: Միավորված ազգերի կազմակերպություն:

ՄԱԿ-Կանայք կառույց (2012) Կանանց նկատմամբ բռնության դեմ գործողությունների ազգային պլանների ձեռնարկ, Նյու Յորք: ՄԱԿ-Կանայք կառույց:

ՄԱԿ-Կանայք, ԱՀԿ, ՄԱԶԾ և ՄԱԹՀԳ (2015) Բռնության ենթարկված կանանց և աղջիկների համար ծառայությունների հիմնական փաթեթներ. հիմնական բաղադրիչներ և որակի ուղեցույցներ, Նյու Յորք: ՄԱԿ:

Հոդվածներ և զեկույցներ

Ֆերբախ Սարա և Օդրի Ռիվզ (2018) «Խորհրդարանների դերը ՆԱՏՕ-ի անդամ պետություններում Կանանց, խաղաղության և անվտանգության օրակարգի առաջխաղացման տեսանկյունից», Ժնև: DCAF:

«2017 թվականի համաշխարհային խորհրդարանական զեկույց. Խորհրդարանական վերահսկողությունը՝ կառավարությանը հաշվետվողականության ենթարկելու խորհրդարանի իրավասությունը», Tignieu-Jameyzieu: Courand et Associés:



DCAF Geneva Centre for Sec rity Sector Governance

OSCE ODIHR

UN WOMEN